



ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՇՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱՐԱԹԱԹԵՐԹ



**Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ
Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ
ՈՒՂԵՐԶԸ ՄԱՐՏԻ 8-Ի՝
ԿԱՆԱՆՅՑ ՏՈՒՆԻ ԱՌԻԹՈՎ**

Լուստ Խորան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից հայրապետական Մեր օրհնությունն ու ջերմ շնորհավորանքներն ենք բերում տիկնանց եւ օրհորդաց՝ մարտի 8-ի տոնական առիթով:

Բազմադարյա մեր պատմության մեր է վկայված հայ կնոջ առաքելությունը մեր ժողովրդի կյանքի առաջընթացի, հոգետր արժեքների պահպանման, կրթության ու մշակույթի զարգացման գործում, այլեւ՝ հայրենիքի պաշտպանության, դժվարությունների ու մարտահրավերների դիմագրավման մաքառումներում: Հայ կանայք աստվածսիրության եւ ազգասիրության մեծագործություններով, քաջության ու խիզախումի պանծալի օրինակներով շարունակ ենթանում ու գործություն են պարգևում մեր ժողովրդի զավակներին:

Մեր գնահատանքն ենք բերում ձեզ, սիրելի՛ կանայք, որ հավատքով ու սիրով այսօր էլ ձեր ջանքերն ու նվիրումն եք բերում պետական ու հասարակական մեր կյանքի բոլոր ասպարեզներում, որպեսզի միշտ ծաղկուն լինի հայ կանայք, գորացյալ՝ հայ ընտանիքը, եւ բարօր ու շեն՝ հայրենի մեր երկիրը:

Մեր մաղթանքն է, որ Երկնավոր Տիրոջ օրհնությամբ միշտ լինեք խիզախ լեցուն ու երջանիկ, միշտ գեղեցիկ՝ օրհնված առաքինություններով ու բարեգործությամբ:

Աղոթում ենք, որ Բարձրյալն Աստված Իր Սուրբ Աջի հովանու ներքո պահպանի բոլոր կանանց, պարգևի երջանկությամբ լի արեւառատ տարիներ եւ երկնառաք բյուր բարիք:

Մեր Տեր Հիսուս Քրիստոսի շնորհները, սերն ու խաղաղությունը թող լինեն ձեզ՝ ամենքիդ հետ. Ամեն:

**ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ
Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց**

**Ռուսաստանի Դաշնության
առողջապահության նախարարին**

2 մարտի



Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՌԴ առողջապահության նախարար Վերոնիկա Սկվորցովային՝ ուղեկցությամբ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարար Արմեն Մուրադյանի:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ողջունելով նախարարի գլխավորած պատվիրակությանը, կարեւորեց առողջապահական ոլորտում երկու երկրների միջեւ համագործակցության ամրապնդմանն ուղղված քայլերը:

Նորին Սրբությունն իր գոհունակությունը հայտ-

10 մարտի

Շիրակի նորանշանակ մարզպետին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Շիրակի նորանշանակ մարզպետ Զովսեփ Սիմոնյանին եւ թեմի առաջնորդ Միքայել եպս Աջապահյանին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը նշանակման առթիվ շնորհավորեց մարզպետին եւ հաջողություններ մաղթեց նրա ծառայությանը: Նորին Սրբությունը հավելեց, որ դժվարին առաքելություն է Շիրակի մարզպետ լինելը, քանի որ մարզում տակավին վերացված չեն երկրաշարժի ավերիչ հետեւանքները:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը գոհունակությամբ արձանագրեց, որ Միքայել սրբազանը եւս մասնակից է մարզի բնակչության խնդիրների կարգավորմանն ուղղված սոցիալական ծրագրերին եւ իբրեւ «Գյումրին առանց տնակների» ծրագրի հոգաբարձուների խորհրդի նախագահ՝ իր աջակցությունն է բերելու Գյումրու կարիքավոր ընտանիքներին:

Իսկ տիար Զովսեփ Սիմոնյանը վստահություն հայտնեց, որ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի եւ Ամենայն Հայոց Հայրապետի օրհնությամբ ավելի արդյունավետ կերպով կկարողանա կատարել իր պարտականությունները: Նա խոսեց նաեւ մարզպետարանի եւ թեմի միջեւ առկա ջերմ ու գործակցային հարաբերությունների մասին՝ պատրաստակամություն հայտնելով ըստ ամենայնի գորակցելու Հայ Եկեղեցու ազգանպաստ առաքելությանը:

13 մարտի

ՀՀ կրթության եւ գիտության նորանշանակ նախարարին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՀՀ կրթության ու գիտության նախարար Լեւոն Մկրտչյանին: Հանդիպմանը ներկա էր նաեւ Մայր Աթոռի քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Վարդան եպս Նավասարդյանը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը, նշանակման առիթով շնորհավորելով տիար Լ. Մկրտչյանին, իր բարեմաղանքները տվեց վերջինիս: Կրթության

համակարգն առաջնային եւ կարեւոր նկատելով՝ Նորին Սրբությունը վստահություն հայտնեց, որ պրն նախարարը, քաջաճանաչ լինելով ոլորտին, իր հարուստ փորձառությամբ կկարողանա օգտակար ծառայություն բերել:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն անդրադարձավ Մայր Աթոռի եւ ԿԳՆ-ի միջեւ ձեւավորված սերտ համագործակցությանը: Այս առիթով Նորին Սր-

նեց մարտի 1-ից 2-ը Երեւանում անցկացվող «Հանրային առողջապահության նոր մարտահրավերները» խորագրով միջազգային նախարարական համաժողովի առիթով՝ վստահություն հայտնելով, որ այն հնարավորություն կտա ավելի ընդլայնելու համագործակցությունը նախարարությունների միջեւ եւ առկա փորձի փոխանակմամբ կնպաստի առողջապահական ոլորտի խնդիրների հաղթահարմանը:

Վեհափառ Հայրապետը մաղթեց, որ Բարձրյալի օգնությամբ բարեբեր լինեն առողջապահությանն ուղղված համատեղ ջանքերը, որպեսզի հնարավոր լինի առավել արդյունավետ կերպով պահպանել եւ վերականգնել մարդկանց ֆիզիկական առողջությունը:

Հանդիպմանը տիկին Վերոնիկա Սկվորցովան, անդրադառնալով հայ-ռուսական պատմական ու միջմշակութային ամուր կապերին եւ Հայաստան կատարած այցի արդյունքներին, շեշտեց, որ այսօրինակ համագործակցության արդյունքում ստեղծվում են առողջապահական խնդիրների լուծման առավել արդյունավետ մոտեցումներ:

Չրույցի ընթացքում խոսվեց նաեւ երկու ժողովուրդների կյանքում առկա մարտահրավերների մասին, ինչպես նաեւ քննարկվեցին առողջապահական ծառայությունների մատուցման բնագավառում նկատվող դրական տեղաշարժերը:

Հանդիպմանը ներկա էր Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Նաթան արք. Հովհաննիսյանը:



Վերջում Նորին Սրբությունը Շիրակի մարզպետին մաղթեց Աստծու օրհնության ներքո փառքով եւ պատվով իրականացնել իր ծառայությունը:

Չրույցի ընթացքում անդրադարձ կատարվեց մարզի սոցիալական խնդիրներին, ինչպես նաեւ՝ հոգետր կյանքին ու եկեղեցաշինության ծրագրերին:

Շարունակությունը՝ էջ 2

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Վերականգնողական և սոցիալական նորանշանակ նախարարին



Սկզբը՝ էջ 1

Նորին Սրբությունը մասնավոր գոհունակության խոսք ասաց նաեւ Զրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Վարդան սրբազանին՝ ընդգծելով, որ կենտրոնի շնորհիվ հանրակրթական ոլորտի ներկայացուցիչները հոգեւորականների հետ միասին սերտ համագործակցության մեջ են գտնվում եւ միասնաբար ամեն ջանք ու եռանդ ներդնում, որպէսզի մատաղ սերունդն ավելի մոտիկից հաղորդ դառնա ազգային-մշակութային հարուստ արժեքամակարգին:

Իր հերթին տիար Լեւոն Մկրտչյանը, շեշտելով Հայ Եկեղեցու առաքելության կարեւորությունը հայ մարդու կյանքում, նշեց, որ ինքը մեծապէս արժեւորում է Հայ Եկեղեցու դերակատարությունը կրթական բնագավառում:

Չրույցի ընթացքում անդրադարձ կատարվեց նաեւ կրթական ոլորտի բարեփոխումներին, Հայ Եկեղեցու պատմությունն առաւելաւ ուսուցիչների վերապատրաստմանը, առկա մարտահրավերներին ու դրանց կանխարգելման հրամայականներին:

Ռուբեն Սեւակի հիշատակին նվիրված ոգեկոչման հանդես Մայր Աթոռ Ս. Էջմիածնում



Փետրվարի 28-ին, օրհնությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Մայր Աթոռ Սբ Էջմիածնի «Ռուբեն Սեւակ» թանգարանում

տեղի ունեցավ ոգեկոչման հանդես՝ նվիրված նահատակ բանաստեղծի հիշատակին:

Բացման խոսքով հանդես եկավ թանգարանի տնօրեն Սեւակ քին. Սարիբեկյանը:

Այնուհետեւ ցուցադրվեց «Շողակաթի» նկարահանած ֆիլմը՝ նվիրված Ռուբեն Սեւակի կյանքին եւ նահատակության պատմությանը:

«Ռուբեն Սեւակ առեղծվածային բանաստեղծը» խորագիրը կրող բանախոսությամբ հանդես եկավ գրականագետ, ՀՀ Սփյուռքի փոխնախարար Սերժ Սրապիոնյանը:

Ցերեկույթի ընթացքում ՀՀ վաստակավոր արտիստ Սիլվա Յուզբաշյանի կատարմամբ հնչեցին Ռ. Սեւակի, Դանիէլ Վարուժանի, Սիւսաննայի, Մեծարեւոյի եւ Վիլյամ Սարոյանի ստեղծագործություններից:

Հանդեսի երաժշտական բաժնում ելույթ ունեցան «Հայաստանի Նոր անուններ» ծրագրի պատանի երաժիշտները:

Ոգեկոչման հանդեսը եզրափակվեց Մայր Աթոռի քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Վարդան եպս Նավասարդյանի օրհնության խոսքով:

ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ

Սկզբը՝ 2015 թ. թիվ 17

Ապաշխարության խորհուրդի ձեւավորման համար եկեղեցական որոշակի կարգադրություն կամ ժողովական որեւէ կանոն հիմք չեն ծառայել, այդ իսկ պատճառով չենք կարող հստակ ասել, թե որ դարում է այն ձեւավորվել: Սակայն Նոր Կտակարանի համաձայն՝ ապաշխարությունը հաստատել է մեր Տեր Հիսուս Զրիստոս, եւ այն կիրառվել է դեռեւս առաքելական շրջանից: Գործը առաքելոցի ԺԹ գլուխը վկայում է, որ արդեն իսկ առաքելական շրջանում խոստովանությունն ու ապաշխարությունը կայն տարածում էին գտել: Ամբրոսիոսը Սաղմոսաց գրքի ԼԸ գլխի մեկնության մեջ գրում է. «Այն ամենը, ինչ մովսիսական օրենքով Աստուծոյ

բանաձեւումների՝ ծիսապաշտամունքային համակարգին եւ խորհուրդներին վերաբերող հարցերում Եկեղեցին առաջնորդվել է «խելամիտ ազատասիրությամբ» (Ռ. Неродов, Таинство и обряды православной Церкви, Москва, 1995, с. 117), ընտրել արարողակարգի նոր եղանակներ՝ նկատի ունենալով դրանց բարերար ազդեցությունը հավատացյալների վրա:

Եկեղեցական նշանավոր հայրեր Օգոստինոսը եւ Հովհան Ոսկեբերանն իրենց երկերում անդրադարձել են ապաշխարությանը. նրանց տեսակետերը հիմնավորվել են Փրկչի քարոզներով:

Բարսեղ Կեսարացին իր կանոններում գրում է. «Պէտք է խոստովանել




դատաստանին եր վերապահում, Զրիստոս առաքելների դատին յանձնեց» (Հ. Թերճիմանեան, Խորհրդական խոստովանություն, Վենետիկ, 1873, էջ 18):

Եկեղեցին ջանացել է Ապաշխարության խորհրդի կատարման կարգը համապատասխանեցնել պատմական ժամանակաշրջանի հոգեւոր, հասարակական ու պատմամշակութային պահանջներին՝ մշակելով առավել ընդունված եւ գործածելի համակարգ (Филарет архиепископ Черниговский, Православное догматическое богословие, изд. III, Чернигов, 1882, с. 74): Ի տարբերություն դավանաբանական անփոփոխ

նրանց, ում Զրիստոս իշխանութիւն տուեց աստուածային խորհուրդները կատարելու» (Հ. Թերճիմանեան, Նշվ. աշխ., էջ 18): Իսկ Հերոնիմոսը Մատթեոսի Ավետարանի ԾԱ գլխի մեկնության մեջ նշում է. «Ինչպէս եպիսկոպոսը, նոյնպէս եւ քահանան կապում կամ արձակում էր մեղքերը...» (տե՛ս անդ): Այսինքն՝ Զրիստոսի տված իշխանությամբ եւ հրահանգով մեր մեղքերի թողութիւնն ենք գտնում քահանայի (օծյալ հոգեւորականի) խորհրդական արձակմամբ: Տիրոջ խոսքի համաձայն՝ երկնքի դռները կարող են բացել նրանք, որոնց տրվեց հոգեւոր իշխանություն:

Շարունակությունը՝ էջ 3

Նրասարակվել է Մայր Աթոռ Սբ Էջմիածնում (2016 թ.)



Հ. Վարդան ՀԱՅՈՒՆԻ. «Պատմութիւն Հայոց Աղօթանատույցին»

Սույն վերահրատարակությունը 20-րդ դարի հայ ծիսական գրականության ու հայ ծեսի մասին ամբողջական աշխատություններից մեկն է: Այն շարունակում է պահպանել իր կարեւորությունն ու նշանակությունը հայ ծեսի ուսումնասիրության ոլորտում:

Հ. Վարդան Հայկունու գրքի անդրանիկ հրատարակությունը լույս է տեսել 1965 թվականին՝ հեղինակի մահվանից շուրջ 20 տարի անց: Առաջին հրատարակության արժեքավոր առանձնահատկություններից է նաեւ իբրեւ հավելված տեղադրված «Խրատ ժամատեղեաց»-ների

բնագրերի առկայությունը, որոնք քաղված են Վենետիկի Ս. Ղազար կղզու Մխիթարյան հայրերի մատենադարանի ձեռագրերից:

Ներկա վերահրատարակության մեջ, գրահրատարակչական սկզբունքներից լինելով, կազմվել են անձնանունների եւ տեղանունների ցանկերը՝ ընթերցողներին այս կամ այն կյուրք փնտրելիս առավել դյուրություն պարգեւելու համար: Հավելվածին կցվել է նաեւ Չեռնո քին. Բարսեղյանի՝ ժամանակին Գեւորգյան հոգեւոր ճեմարանի ավարտական ատենախոսության շրջանակներում Մաշտոցի անվան Մատենադարանի մի շարք ձեռագ-

րերի հիման վրա պատրաստած «Խրատ ժամատեղեաց»-ների բնագիրը՝ առավել ամբողջական ու համապարփակ գաղափար տալու նպատակով: Գրքի բնագիրը վերահրատարակության է պատրաստել Միջայել սրկ. Մարգարյանը:

Աշխատությունը հրատարակվել է մեկենասությամբ «Սարգիս Գաբրիելյան» հիմնադրամի եւ նվիրվում է երջանկահիշատակ Կարապետ քին. Գրընյանի պայծառ հիշատակին:


Մատթեոս վրդ. ԶՈՒՂԱՅԵՑԻ. ԲԱՐՈԳՆԵՐ

Մայր Աթոռ Սբ Էջմիածնի հրատարակչական բաժինը լույս է ընծայել 14-րդ դարի մեծանուն մատենագիր Մատթեոս վրդ. Զուղայեցու քարոզները՝ աշխատասիրությամբ Խաղ քին. Ղազարյանի:

Գրքում ներկայացված է վեց ձեռագրերի հիման վրա կազմված քանկերը քարոզների համեմատական-գիտական բնագիրը: Ներկա աշխատությունը կազմված է ներածությունից, որը համառոտ ակնարկն է Մատթեոս վրդ. Զուղայեցու կյանքի, գործունեության եւ մատենագրական վաստակի մասին: «Ուսումնասիրություն» բաժնում ներկայացված են Մատթեոս վարդապետի քարոզները, քարոզների նախկին ու նոր ցանկերը, իսկ «Բնագրեր» բաժնում՝ օգտագործված ձեռագրերի նկարագրությունը:

Գիրքը հրատարակվել է մեկենասությամբ «Սարգիս Գաբրիելյան» հիմնադրամի:

Լրատվական կյուրքեր՝
ՄԱՅՐ ԱԹՈՐ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԾՆԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ



Սկիզբը՝ 2015-ի

թիվ 22-24 եւ 2016-ի թիվ 1-4


Ս. Երեմյանը, հենվելով Պտղոմեոսի ներկայացրած տվյալների վրա, հետեւյալ կերպ է վերակազմել Մեծ Հայքի սահմանները: Այսպես՝ Մեծ Հայքի սահմանը հյուսիսից կազմում էր Կողքիսի մի մասը, այսինքն՝ Ճորոխ գետի ստորին հոսանքում գտնվող Եզր «փոքր աշխարհը», ապա Վիրքը եւ Աղվանքը՝ Կուր գետով: Արեւմուտքից սահմանագիծն անցնում էր Եփրատ գետով, որը բաժանում էր Մեծ Հայքը Կապադովկիայի կազմում գտնվող Փոքր Հայքից, ապա Եփրատից հյուսիս-արեւելք տարածվող Մուսխական լեռներով մինչեւ Կողքիս: Արեւելքից Մեծ Հայքի սահմանն էր Կասպից ծովը՝ Կուրի գետաբերանից մինչեւ ներկայիս Աստարայի մերձակայքը, որտեղից սահմանը Մեդիայից բաժանող Կասպիական լեռներով թեքվում էր դեպի արեւմուտք: Հարավում Հյուսիսային Միջագետքի հետ սահմանագիծն անցնում էր Հայկական Տավրոսի լեռներով, Եփրատի արմուկով (որով սահմանագատվում էր Կիլիկյան Տավրոսից), Եփրատ եւ Տիգրիս գետերով ու Նիփատես (Նպտո) լեռներով: Վերջիններս սահմանագատում էին Հայաստանը «Ասորեստանից»: Զանի որ վերջին սահմանագծում իրականում գործ ունենք Ադիաբենեի հետ, ուստի, ինչպես արդեն նշել ենք, ըստ Ս. Երեմյանի, այստեղ հանդիպում ենք Տրայանոս կայսեր կողմից 116 թ. նվաճումից հետո հռոմեացիների կողմից «Ասորեստան» պրովին-

Մեծ Հայքը Կլավդիոս Պտղոմեոսի «Աշխարհագրություն» երկում

ցիայի մեջ մտցված Ադիաբենեի հետ:

Ս. Երեմյանը միաժամանակ գտնում է, որ Պտղոմեոսի «Ասիայի երրորդ քարտեզ»-ում Մեծ Հայքը ներկայացված է ըստ մինչեւ 37 թ. ունեցած սահմանների: Նա իր այդ եզրահանգումը հիմնավորում է նրանով, որ իր համոզմամբ՝ Պտղոմեոսի հիշատակած Գոսարենեն ներկայացնող Գողերձական կուսակալությունը 37 թ. պայմանագրով տրվել է Իբերիային, այսինքն՝ Կրաց թագավորությանը, ուստի կուսակալության հիշատակումը Մեծ Հայքի սահմաններում նշանակում է, որ գործ ունենք մինչեւ 37 թ. գոյություն ունեցած սահմանների հետ:

Նման եզրահանգման ճշմարտացիությունն ստուգելու համար անհրաժեշտ է քննության առնել 37 թ. հետո Մեծ Հայքի սահմանները ներկայացրած որեւէ այլ հեղինակի երկ: Ժամանակագրական առումով՝ ամենահամապատասխան հեղինակը Պլինիոս Ավագն է, ով գրեթե նույն սահմաններն է ներկայացնում: Ստորեւ ներկայացնում ենք նրա մատնանշած սահմանները. «Մեծ Հայքը, որ սկսվում է Պարիադես (իմա՝ Պարիսարյան կամ Պոնտական - Մ. Մ.) լեռներից, ինչպես ասացինք, Կապադովկիայից բաժանված է Եփրատով, եւ Եփրա-



Աշխարհի քարտեզը՝ ըստ Պտղոմեոսի (ըստ Յոհաննես Շնիցերի 1482 թ. հրատարակության)

տից հետո Միջագետքից բաժանված է Տիգրիսով, որը նվազ հայտնի գետ է: Մեծ Հայքը ծնունդ է տալիս թե՛ մեկին, թե՛ մյուսին եւ կազմում է սկիզբը Միջագետքի... Այսպիսով՝ այն ձգում է իր սահմանը մինչեւ Ադիաբենե՝ նրանից բաժանված լինելով լայնակի մի լեռնաշղթայով, իսկ ձախ կողմում լայնությամբ տարածվում է մինչեւ Կյուրոս գետը՝ անցնելով Արաքս գետից

այն կողմ, իսկ իր երկարությամբ տարածվում է մինչեւ Փոքր Հայքը, որից բաժանված է Եվբսիկյան Պոնտոսի (իմա՝ Սեւ ծով - Մ. Մ.) մեջ թափվող Ապարոս (իմա՝ Ճորոխ - Մ. Մ.) գետով եւ Ապարոսին ծնունդ տվող Պարիադես լեռներով:

Հատկանշական է, որ Պլինիոս Ավագը հիշատակում է Ադիաբենեն նույն այն տեղում, որտեղ հետա-

գայում Պտղոմեոսը հիշատակում է Ասորեստանը: Այս փաստը եւս մեկ անգամ ամրագրում է մեր այն եզրահանգումը, որ Պտղոմեոսը ներկայացնում է 117 թ. հաջորդող աշխարհաքաղաքական իրավիճակը տարածաշրջանում:

Անհրաժեշտ է նաեւ ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ «Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա»-ի առաջին հատորում Պլինիոսի աշխատանքը հայերեն հրատարակելիս Պ. Հովհաննիսյանը եւ Ա. Մովսիսյանը իրավացիորեն նկատում են, որ Ադիաբենեի եւ Մեծ Հայքի սահմանով ձգվող «լայնակի մի լեռնաշղթա»-ն Նիփատես լեռներն են, որոնք գտնվում են Փոքր Խաբուր գետից դեպի արեւելք: Այսպիսով՝ Մեծ Հայքի՝ Պլինիոսի եւ Պտղոմեոսի երկերում հիշատակվող սահմանները գրեթե նույնությամբ կրկնում են միմյանց:

Համարյա նույն պատկերն է նաեւ «Աշխարհացոյց»-ի համառոտ խմբագրության մեջ. «Զսան եւ Եւթներորդ՝ Մեծ Հայք են, յելից կալով Կապադովկոյ եւ Փոքր Հայք, առ Եփրատ գետով, մերձ Տաւրոս լեռան, որ բաժանէ զնա ի Միջագետաց: Եւ ի հարաւոյ սահմանի Ասորեստանի եւ դառնայ առ Ատրպատականի ընդ Մարս մինչեւ ի մուտս Երասխայ եւ Կասբից ծով. իսկ ըստ հարաւոյ առ երկ կալով Ադուանից եւ Կրաց եւ Եզեր մինչեւ ցաղոյ դարձնաճք Եփրատայ ի հարաւակոյս»: Նշենք, որ այս հատվածը բացակայում է «ընդարձակ խմբագրության» մեջ:

Շարունակությունը՝ էջ 5

Սկիզբը՝ էջ 2

Վաղ շրջանում Եկեղեցում կիրառվել է ապաշխարության երկու ձեւ՝ հրապարակային եւ առանձնական կամ անհատական: Զրիստոնեության վաղ շրջանում հրապարակային խոստովանությունը կատարվում էր եպիսկոպոսի առջեւ՝ որը հավատացյալ համայնքի ներկայությամբ: Ապաշխարանքի այս ձեւը նախատեսված էր քրիստոնեական համայնքի այն անդամների համար, որոնք գործել էին «ծանր մեղքեր»՝ Եկեղեցու հեղինակությունը ոտնահարող եւ հավատացյալներին մոլորեցնող: Առաքելական շրջանից հայտնի է կորնթացի մեղսագործի ապաշխարության օրինակը. վերջինս Պողոս առաքյալի հրահանգով զրկվեց Եկեղեցական հաղորդակցությունից, քանզի «լավ չեն ձեր այդ պարծանքները. չգիտե՞ք, թե մի փոքր թթմամբ ամբողջ զանգվածը խմորում է: Մաքրեցե՞ք, դե՞ն նետեցե՞ք ի՞նչ խմորը, որպեսզի նոր զանգված լինե՞ք՝ առանց թթմամբի. քանզի Զրիստոս՝ մեր զատիկը, մորթվեց: Ուրեմն, տո՛ն կատարենք ոչ թե ի՞նչ խմորով եւ չարության ու անզգամության խմորով, այլ՝ ստուգության եւ ճշմարտության անթթմոր հացով» (Ա Կորնթ. Ե 6-8):

Մեղսագործի երկարատեւ ապաշխարանքից եւ իրական զոջումից հետո միայն Պողոս առաքյալը նրան կրկին ընդունեց Եկեղեցու գիրքը, որովհետեւ «այնպիսի մեկի համար բավական է այն պատիժը, որ տրվեց շատերից. այնպես որ, դրան հակառակ, դուք պետք է ներքե նրան եւ մխիթարեք, որպեսզի չափազանց տրտմությունից չխորտակվի նա: Ուստի, աղաչում եմ ձեզ նրա հանդեպ վերստին սեր ցույց տալ...» (Բ Կորնթ. Բ 6-9):

Հրապարակային ապաշխարությունը համարվում էր բժշկում իրապես զոջացողների եւ դաս՝ քրիստոնեական համայնքի մյուս անդամների համար:

Քրիստոնեության վաղ շրջանում հետեւյալ երեք մեղքերից՝ կռապաշտություն, սպանություն, ա-



նառակություն, որեւէ մեկի մեջ մեղադրվողը զրկվում էր Եկեղեցական հաղորդակցությունից: Ապաշխարողների համար սահմանված էին նաեւ որոշակի պատիժներ. զրկում էին Եկեղեցուն նվիրատվություն կատարելու եւ հաղորդակցվելու իրավունքից, արգելում էին Եկեղեցական ու համայնական ժողովներին մասնակցել, ծիսական արարողություններին եւ խորհուրդներին ներկա գտնվել: «Եկեղեցուց արտաքսումը» համարվում էր ծանրագույն պատիժ եւ կիրառվում էր այն մեղքերի համար, որոնք կատարվում էին գիտակցաբար, կամքի ազատ դրսեւորմամբ եւ ոչ թե կարիքից դրդված, անգիտությամբ ու ճնշման ներքո: Համայնքից հեռացնելիս հիմնվում էին ապաշխարողի խոստովանության, նաեւ հավաստի վկայությունների ու տվյալների վրա: Այդ հավատացյալի անունը հեռացվում էր քրիստոնեական համայնքի անդամների ցուցակից, եւ մյուս հավատացյալներին արգելվում էր հաղորդակցվել ու շփվել նրա հետ: Զրիստոնեական համայնքից արտաքսվածին ներում էր շնորհվում միայն իրական զոջումից եւ երկարատեւ ապաշխարանքից հետո («Ո-

каяние в древней христианской Церкви». "Воскресное чтение", т. 9, Москва, 1912, с. 105):

Հրապարակային ապաշխարությունը լայն տարածում է գտել հատկապես Գ դարի առաջին կեսին՝ Դեկուս կայսեր (249-251 թթ.) հալածանքների հետեւանքով: Զսան տարվա անդորրից հետո քրիստոնյաների նկատմամբ հալածանքները վերսկսվեցին առանձնակի դաժանությամբ, ինչի հետեւանքով բազմաթիվ հավատացյալներ ուրացան իրենց հավատքը, զոհեր մատուցեցին կուռքերին, հրաժարվեցին քրիստոնեական վարդապետությունից: Հալածանքների ավարտից հետո ուրացողները փորձեցին կրկին վերադառնալ քրիստոնեական Եկեղեցի: Նրանք իրենց ուրացությունը համարում էին հարկադրյալ՝ հալածանքների երկյուղի ներքո պարտադրված, ուստի գտնում էին, որ կարող են անպատիժ մնալ եւ անարգել վերադառնալ Եկեղեցի: Որոշ հոգեւորականներ նրանց ետ էին ընդունում առանց արգելքի ու պատժի, ինչը հանգեցնում էր քրիստոնեական բարոյական համակարգի արժեզրկման:

Կիպրիանոս Կարթագենացին հակադրվեց այն հոգեւորականներին, որոնք մասնավոր կարգով քննում էին ուրացողներին եւ անարգել ետ ընդունում Եկեղեցի: Ըստ նրա՝ ապաշխարանքը պետք է երկարատեւ ու գիտակցված գործընթաց լինէր. ուրացողը պետք է զոջար, խոստովանէր, մաքրագործվէր, աղոթէր, որոշակի պատիժ կրէր, որից հետո միայն ետ ընդունվէր քրիստոնեական համայնք, մասնակցէր Եկեղեցական կյանքին, հաղորդվէր Տիրոջ մարմնին ու արյանը. «Ահա թե ինչու, ով որ ուստի այս հացը կամ խմի Տիրոջ այս բաժակն անարժանորեն, պարտական պիտի լինի Տիրոջ մարմնին եւ արյանը: Թող մարդ նախ ինքն իրեն փորձի եւ ապա ուստի այդ հացի ու խմի այդ բաժակից. որովհետեւ, ով ուտում է եւ խմում անարժանորեն, իր իսկ դատապարտությունն է ուտում եւ խմում, քանի որ չի գատորոշում Տիրոջ մարմինը» (Ա Կորնթ. Ա 27-30):

Ապաշխարության խնդրի շուրջ ծավալված վիճաբանություններն աստիճանաբար սրվում էին: Այսպես՝ Նովացիանոսը պնդում էր, որ ոչ միայն ծանր մեղքեր գործողներին չպետք է ետ ընդունել Եկեղեցի, այլ նաեւ բոլոր նրանց, որոնք առաջին ապաշխարությունից հետո կրկին մեղանչել էին: Նա պնդում էր, որ Եկեղեցին չպետք է իր գիրկն ընդունի «պիղծերին» եւ մեղսագործներին, որոնք իրենց արատավոր վարքով կարող են «վարակել» մաքրակենցաղ հավատացյալներին: Ըստ Նովացիանոսի՝ առավել խելամիտ կլինէր մեղսավորների ներումը վերապահել միայն Աստծուն, քանզի ծառան չի կարող ներել նրանց, ովքեր մեղք են գործել իր Տիրոջ դեմ. նրա հետեւորդներն իրենց համարում էին «մաքրակենցաղների» բացառիկ համայնք: Նովացիանոսի տեսակետերը ծայրահեղ պահպանողական էին, հակադրվում էին քրիստոնեական

ներողամտությանն ու ողորմածությանը, մեղսավորներին Աստծո եւ Եկեղեցու հետ հաշտվելու որեւէ հույս չէին թողնում, ուստի պաշտպանություն չգտան:

Այս խնդրի շուրջ ծավալված վիճաբանությունները հարթելու նպատակով 251 թ. իրավիճակը Կարթագենի Եկեղեցական ժողովը, որի ընդունած որոշումների համաձայն՝ պետք է ներում եւ մեղքերի թողություն շնորհվէր բոլոր նրանց, ովքեր ունեին ճշմարիտ հավատ, իրապես զոջում էին, խոստովանում, փորձում քավել իրենց մեղքերը եւ դրանք այլեւս չկրկնելու հաստատականություն էին ցուցաբերում: Կարթագենի Եկեղեցական ժողովը վերականգնեց «...ապաշխարության միջոցով մեղսավորներին վերականգնանցնելու եւ բժշկելու» կարգը («О публичном покаянии. Православный собеседник», ч. 1, Казань, 1868, с. 124):

Վերոնշյալ որոշումներն ընդունեց նաեւ Հռոմի 251 թ. Եկեղեցական ժողովը: Խնդիրը հետզհետեւ հարթվում, եւ հաստատվում է Ապաշխարության խորհուրդի արարողակարգը:

Լաոդիկեի 366 թ. Եկեղեցական ժողովի երկրորդ կանոնը խոստովանողների համար մեղքերին համապատասխան ապաշխարանք էր սահմանում (Հ. Թերճմանեան, Խորհրդական խոստովանութիւն, էջ 28). պատիժը պետք է համապատասխանէր գործած մեղքին: Այս մասին Կիպրիանոսը գրում է. «Որքան մեղք ենք գործում, այնքան պետք է արտասվենք: Խոր վերքը երկարատեւ ապաքինում է պահանջում... Ապաշխարանքը մեղքից թեթեւ չպետք է լինի» («Покаяние в древней христианской Церкви», т. 9, с. 106-107): Նշենք, որ պատժի ձեւն ու ապաշխարանքի տեւողությունը կախված էին ոչ միայն մեղքի ծանրությունից, այլ նաեւ այն գործելու պատճառներից եւ հանգամանքներից:

Շարունակելի

Արփինե ՉԱՆԹԻՎՅԱՆ

Թոնորական շարժումը եւ նրա դարազրույթներին դասադարձող գեղարվեստական համադասերը

Նովի. Շիրազի «Թոնորակեցիները» դոնմում

1. «Թոնորակեցիները» պոեմը հրատարակման գրեթե նույն ճակատագրին արժանացավ, ինչ նրա նախորդը՝ «Անին»։ Այն մեր աշխատասիրությամբ եւ առաջաբանով 2014-ին լույս տեսավ բաժնատեղծի ծննդյան 100-ամյակի տոնակատարության օրերին։

Պոեմը տպագրության պատրաստելիս կանգնած ենք եղել տեքստաբանական որոշ դժվարությունների առջև։

Բարեբախտաբար պահպանվել է պոեմի երեք օրինակ՝ երեք տարբեր թղթապանակներում։ Ոչ մեկը մաքուր մեքենագիր 1-ին օրինակ չէր, եւ դրանցից որեւէ մեկին խորհրդային խմբագրի ձեռք չէր դիպել։ Թղթապանակները պայմանականորեն համարակալեցինք՝ 1-ին, 2-րդ, 3-րդ։ Դրանցում, սակայն, առկա են միմյանց հաջորդող դժվարությունների, թույլ պատճենիչով տպած մեքենագիր խառն ու աղուտ էջեր՝ 2-րդ, 3-րդ, անգամ 4-րդ օրինակներ։ Էջեր էլ կան, որ տսնծված են մկրատված տարբեր օրինակներից, կան էջեր, որ ունեն հեղինակային ձեռագիր, ինչպես են մեքենագրված հավելումներ։ Թեեւ երեք թղթապանակներում էլ այդ խառն էջերը համարակալված են, սակայն դրանք բացարձակ նույնը չեն։ Երեւում է, որ հեղինակը երեք օրինակների վրա էլ աշխատել է, սակայն դրանցից մեկն է համարել տպագրության հանձնարարելի վերջնական ու ամբողջական օրինակ։



Երկրորդ թղթապանակում, օրինակ, որոշ էջեր կրկնվում են նույն կամ տարբեր թվահամարներով։ Իսկ թղթապանակի հակառակ երեսին առկա է, ըստ երեւոյթի՝ պոեմի մշակման ընթացքում զուգահեռաբար ծնված, նրան թեմատիկ-գաղափարական հիմքով ու գաղափարական հարցադրումներով առնչակից, կարմիրով գրված երկտող տնեղով հետեւյալ անթվակիր անտիպ բանաստեղծությունը, որ պոեմի հետ միասին հրապարակել էինք գրքի առաջաբանում.

*Հիմա սուրը Հիսուսի գույգ
բերանով կկտրե,
Տա՛ Աստված, որ Մասիսի
շղթաներն էլ բզկտե։
Կբզկտե, հավատ կա, ինչպես
թուրքը բզկտեց՝*

*Անապատներ սփռելով հայոց
ազգին [...] (հեղինակի ձեռքով
շնչված անընթեռնելի, անվերծա-
նելի բառ - Ս. Ս.)*

*Մեզ եղեռնեց ու զինեց հայոց
Մասիսն հայոց դեմ,
Մեզ եղեռնեց Դանթեի
դժոխքից էլ դեռ դժխեմ։*

*Ձնչեց, իրավ, մի ողջ ազգ, որք
սփյուռքեց անտերուհչ,
Ձգեց այս չար աշխարհի
անապատներն անմռուկ...*

Բանաստեղծի կրտսեր որդու՝ Վանանդի հետ միասին համեմատելով երեք թղթապանակները՝ եկանք այն համոզման, որ ընտրվածը հենց այն թղթապանակն է, որի մեջ կա էջերի 1-ին օրինակների բացարձակ գերակշռություն,

եւ առատ են հեղինակային ձեռագիր վերջին հավելումները։ Այդ թղթապանակն էլ կրում է հեղինակային մի մակագրություն. «Այս պոեմիս հոնորարը Սիփանին եւ բոլորին։ Հ. Շ.»։ Մակագրությունը թեեւ տարեթիվ չունի, սակայն հայտնի է, որ 1954 թ. գրված պոեմը մի անգամ էլ վերամշակվել է 1970-ին, եւ այս պատճառով է պոեմի գրության տարեթիվը նշված «1954-1970»։ Իսկ մահվանից առաջ բանաստեղծի հետ մեր վերջին գրույցը՝ «Թոնորակեցիները» պոեմի մասին, կայացել է 1984 թ. մարտի սկզբին։ Ուրեմն՝ այդ մակագրությունն արվել է, հավանաբար, այդ իսկ օրերին։

Նպատակահարմար համարեցինք հենց այդ օրինակն էլ՝ անհրաժեշտ համալրումներով, սրբագրական շտկումներով ու ծանոթագրություններով, հանձնել շարվածքի։

Այժմ էլ մտահոգիչ է մի էական հարց. ունի՞ր Յովի. Շիրազն այլևս անտիպ ստեղծագործություններ, թե՞ ոչ։ Անշուշտ ունի, եւ վաղուց հասունացել է նրա երկերի լիակատար ժողովածու գիտականորեն հրատարակելու ժամանակը։ Ավելին. մինչեւ պետական հոգաժողովում այդ գործը գլուխ գա, թանաքով թղթին հանձնված շիրազյան հազարավոր ձեռագիր էջերը՝ ազգային մի բացառիկ հարստություն, անխնամ մատնված են քայքայման, փշրվելու, անընթեռնելիության ու ստույգ կորստյան վտանգին։

«Թոնորակեցիները» պոեմն էլ նույն ճակատագրին էր դատապարտված։ Նրա տարբերակներից մեկին ծանոթ եմ եղել դեռեւս 1960-ական թվականներին՝ մեքենագրված բանաստեղծի ձեռագրի հետ համեմատելու հանգամանքով։ Գիտեի, որ կարելու էր այս պոեմը եւ վերամշակում՝ այն առավել կատարյալ դարձնելու բուն ցանկությամբ, որովհետեւ դեռ չէր մոռացել 1954 թ. իր պոեմի տպագրությունը մեթմելու եւ հինգ տարի անց նույն վերնագրով մեկ ուրիշի պոեմը տպագրելու վիրավորանքի դառնությունը։ Շուրջ 20 տարի անց՝ 1984 թ. մարտի 2-ին, «Սովետական գրող» հրատարակչության շենքում տեղի ունեցավ բանաստեղծի հետ մեր վերջին հանդիպումը։ Մի կարճ երկխոսություն կայացավ։ Իրեն բնորոշ անմիջականությամբ ասաց.

- Երեկ էդ ի՞նչ ես խոսել հրատարակչության տնօրեն Զարույթին (Զարույթունի փոխարեն) Ֆելեյանի հետ «Թոնորակեցիներիս» մասին, որ էսօր հատուկ կանչել է, թե՛ «Դանթեականից» հետո «Անին» պիտի տպենք, հետո էլ՝ «Թոնորակեցիները». բայց ո՞րն են պոեմներդ, բե՛ր։

- Կներես, մեղավոր եմ,- ասացի։- Երեկ ինձ կանչել էր «Դանթեականի» գլուխների արձակ առաջաբանների հարցով, որ նախկինները խմբագրելիս, իբր թյուրիմացաբար, «կորցրել» էին... Դու էլ չէիր գտել թղթերիդ մեջ եւ հուշել էիր՝ «Ուրիշ ելք չկա, Սամվելն ամբողջը անգիր գիտե, թող թելադրե, մեքենագրուիկն գրե»։ Մեր այդպես «գրելուց» հետո՞ էիր գտել նախօրինակը։ Ֆելեյանի հետ երեկ ամբողջ օրը համեմատեցինք՝ մի քանի բառի հոմանշային տարբերություն կար միայն, ուղղեցինք։ Հետո հարցրեց.

Շարունակությունը՝ էջ 6

Սկիզբը՝ թիվ 2, 4

Այստեղ կրկին փոքր տղան որոշում է գործել, ստեղծագործել՝ նույնիսկ առանց հեռուն նայելու, անվարժ ձեռով, խելահեղորեն։ Նրա լարված եւ անշունչ ձիթմերն արտահայտում են նրա անհանգստությունը։ Ինչպես նախկինում, նա ծրագրում էր խաթարել կարգ ու կանոնը, վերադասավորել խառնիճադանջ գույները սեւ գլխազարդի ֆոնի վրա։ Նա կրկնակի անգամ պարզեւատրվում է իր խիզախության համար. մի կողմից՝ ուսուցչուհու գովասանքը, եւ մյուս կողմից՝ նրա գործած ստեղծագործական հրաշքը։ Դպրոցը երեխայի համար դառնում է երկրորդ ապաստարան, որտեղ նա ստանում է ստեղծագործական հարատեւման առաջին դասերը։

Վերը ներկայացված թեմաներից շատերը միաձուլված են ամերիկահայ արվեստագետի «Նամակ մորաքրոջը» բանաստեղծության մեջ։ Սա մի երկ է, որի համընդհանուր ուղերձը սերտորեն կապված է Բոնդի ազգային պատկանելության հետ։ Բազմաթիվ պատճառներով կարելի է ասել, որ սփյուռքահայ պոետի վերջին գրվածքը կենտրոնական տեղ է գրավում հայ-ամերիկյան գրականության մեջ։ Այդ երկն իրենից ներկայացնում է մի հզոր պնդում՝ ազգային ժառանգության վերաբերյալ։ Ըստ այդ պնդման՝ մենք ապրում ենք առանց զղջման զգացումի.

*Բարեհուսո հրվանդանից
Բերված մոմի լույսի ներքո
Իմ տողերն են եւ գրում։
Օգոստոս ամսվա հողմը մոլեգին
Վնաս է տվել հոսանքի գծին,
Ու նստել եմ եւ իմ մուգ սենյակում,
Իսկ իմ տան բակում
Ճառերն են ոռնում։
Իմ հոգու խորքում,
Հույս եմ փայփայում,
Որ իմ ճրագի լույսը չի հանգչի
Մինչեւ գրվածքն իմ հասնի ավարտին։
Կարդացել ես դու տողերն իմ գրած,
Եվ, քո կարծիքով, մռայլ են դրանք,
Սակայն ծիծաղել ես նույնպես գիտեմ
Եվ ես քեզ հիմա դա կապացուցեմ։*

*Երեկ Ձեքի տանը կար մի թմբկահար,
Ով նվագում էր փայտերով շրջված։
Ցանկանում էր նա ստեղծել մեղեդի,
Սակայն դա նման էր միայն աղմուկի։
Ծիծաղաշարժ էր նվագն այդ մարդու,
Բայց չես տեսնում դու առիթ ծիծաղի։
Ցանկացած դեպքում եթե մարդ ուզի,
Ուրախանալու պատճառ կգտնի։
Բանաստեղծական տողերիս հիմքում
Իմ հավատքն է հավերժ գտնվում։
Այսօր ցերեկով մեկնել էի ես
Մի քարափի մոտ, որի վերելում
Վեր էր խոյանում լուսե մի փարոս։
Իմ շուրջը հողմ էր՝ ուժգին, զորավոր,
Եվ այն կոտրել էր բույսերը բոլոր։
Այն, ինչ ես տեսա, առիթ էր թախծի,
Սակայն քեզ համար՝ առիթ ծիծաղի։
Չեմ կարող բնավ ես քեզ բացատրել,
Թե որն է հիմքը իմ համոզմունքի,
Թե որն է հիմքը իմ հավատքների։
Ստիպված եմ գրել նաեւ եղենից.
Մայրս ինձ ասաց օրերից մի օր,
Որ ես տեսնում եմ աշխարհն այս այսօր,
Քանի որ ինքը ջարդերի պահին
Կյանքն էր վստահել միսիներներին։
Իմ գրվածքներում կոտեսնես արյուն։
Այդ մուգ արյունն է հոսում իմ մարմնում։
Կյանքում ոչ մի բան ինձ չի պակասել.
Ո՛չ մի կտոր հաց, ո՛չ քնելու տեղ։
Երկերն իմ գրած ունեն գույն մթին,
Դրանք նման են փողոցի հողմին,
Դրանք նման են տան ներսի մթին։
Սակայն երբեմն գրվածքները իմ
Չուրկ են պատկերից, ձեւից, երանգից
Դրանցում լոկ կան հավատ ու արյուն։*

(Տե՛ս Bond H., «Letter to an Aunt», in Speaking for Ourselves: American Ethnic Writing, ed. Lillian Faderman and Barbara Bradshaw (Glenview, Ill.: Scott, Foresman and Co., 1969, 1975), էջ 618):

Բանաստեղծության առաջին տունը կարծես տեղակայում է բանաստեղծին

Նարոդ Բոնդը (Բոնդջուլյանը) Եւ Մրա ղոնեգիան



մռայված Ամերիկայի եզրագծի վրա։ Օգոստոսյան հողմը սուր ճիչ է արձակում՝ անցնելով ամերիկյան տեղանքներով։ Այն իր հետ լուրջ փոփոխություններ է բերում։ Միայն մոմերը, որոնք խորհրդանշում են ներսից բխող փխրուն, բայց միեւնույն ժամանակ կայուն լուսավորում, որեւէ բան տեսնելու եւ հաղորդակցվելու հնարավորություն են ընձեռում։ Բանաստեղծը գիշերով մի նամակ է գրում իր մորաքրոջը, ով հին սերնդի ներկայացուցիչ է։ Թեեւ նրանք սերում են միեւնույն արմատներից, սակայն նրանց պատկերացումներն ու երազանքները լուսավորված են միանգամայն այլ լույսերով, քանի որ նրանք տարագիրների տարբեր սերունդներին են պատկանում։ Բոնդը գտնում է առկա բաժանումն արտահայտող մի պատշաճ խորհրդանիշ։ Այն, թե ինչպես ենք մենք արտահայտում մեր ուրախությունը, շատ բան է ասում մեր անձնական եւ մշակութային պատմության մասին։ Դա մի բարդ միջոց է, որը ցույց է

տալիս, թե որտեղ ենք մենք պառակտվել, եւ թե որտեղ է մեր հիմնական հեռանկարը։ Ավելի լայն մասշտաբով բանաստեղծի դիտարկումը՝ «Դու ընթերցել ես իմ բանաստեղծությունները եւ որոշել ես, որ դրանք հիմնականում մռայլ երանգ ունեն», բնութագրական են ոչ միայն նրա քնարերգության համար, այլեւ՝ ընդհանրապես ժամանակակից կյանքի։ Վերջինիս մեջ հազվադեպ կարելի է հանդիպել ավանդական իդեալների հաստատմանը։ Այդ կյանքում ծիծաղը նույնացվում է հիստերիայի հետ։ Երաժշտի արած կատակը, որը կարող է գնահատել միայն մեկ այլ արվեստագետ կամ ստեղծագործող, հաստատում է այդ տեսակետը։ Յուրաքանչյուր մարդ կարող է հնչյուններ արձակել՝ միայն թե փոխես դիրիժորական փայտիկների ուղղությունը։ Այն, ինչ պահանջվում է, սուկ գեղարվեստական ձեւի եւ հնչյունների նրբագեղ կերտումն է։

Շարունակությունը՝ էջ 8

Սկիզբը՝ էջ 3

Սկզբնաղբյուրներում շուրջ երեք դար շարունակաբար հանդիպող սահմանային նույնականությունը ցույց է տալիս, որ գործ ունենք հզոր պետության եւ ամուր վարչաքաղաքական համակարգի հետ՝ ամենեւին էլ չփաստելով, թե հնարավոր է՝ Պտղոմեոսի երկում արտացոլված լինեն մինչեւ 37 թ. սահմանները:

Ցավոք, «Աշխարհագրություն» երկում բացակայում է Մեծ Հայքի թագավորության ժողովրդագրության վերաբերյալ որեւէ տեղեկություն, ինչը կարող էր անչափ հետաքրքիր լինել, սակայն օբյեկտիվորեն բացակայում է՝ կախված երկի գուտ քարտեզագրական-տեղագրական բնույթից:

Հետաքրքրական են Պտղոմեոսի ներկայացրած տեղեկությունները Մեծ Հայքի լեռնաշղթաների, գետերի եւ լճերի մասին: Պտղոմեոսը Մեծ Հայքի լեռնաշղթաների թվում նշում է Մոսխական եւ Պարիսպոնտյան լեռները, Ուդակետսկայա լեռը, Անտիտավոսի՝ «Եփրատից ներս ընկած մասը...», Արոս լեռը եւ Գորդյուական լեռները: Պ. Հովհաննիսյանը եւ Ա. Մովսիսյանը «Հայ ժողովրդի պատմության քրեստոմատի»-ի երկրորդ հատորում Պտղոմեոսի՝ Մեծ Հայքին առնչվող հիշատակությունների հայերեն թարգմանության հետ տվել են ծանոթագրություններ, որտեղ Ուդակետսկայա լեռը ներկայացրել են որպես ներկայիս Քոչաթաղի լեռները, Արոս լեռը՝ Սրմանց լեռները, իսկ Գորդյուական լեռները՝ Կորդվաց լեռնաշղթան:


Պտղոմեոսը որպես Մեծ Հայքի կարեւոր գետեր է թվում Արաքսը (որը մի բազուկով թափվում էր Կուր գետը, իսկ մյուս բազուկով՝ Կասպից ծով), Եփրատը եւ Տիգրիսը: Ընդ որում՝ հարկ է նշել, որ Պտղոմեոսը Տիգրիսի ակունքը սխալմամբ տանում է Թոսպիտիս (իմա՝ Բզունայաց, Վանա) լիճ:

Պտղոմեոսը Մեծ Հայքում հիշատակում է ոչ միայն Թոսպիտիս, այսինքն՝ Վանա լիճը, այլ նաեւ Լյուքսիտիս եւ Արսեսա լճերը: Ս. Երեմյանի կարծիքով՝ Լյուքսիտիս (Լիխնիտիս) լիճը համապատասխանում է Գեղարքունյաց, այսինքն՝ Սեւանա լճին: Խնդիրն ավելի բարդ է Արսեսայի կապակցությամբ: Ստորաբնը Վանա լճի պարագայում գործածում է նաեւ Արսենե անվա-

Մեծ Հայքը Կլավդիոս Պտղոմեոսի «Աշխարհագրություն» երկում

Նումը, ինչը կարող էր եւ շփոթեցնել Պտղոմեոսին: Անվանումն առավել մոտ է հնչում Արճակ լճի անվանը, սակայն այստեղ պարզունակ հնչունաբանական ենթադրություն անելու փոխարեն անհրաժեշտ է քննության առնել ներկայացվող աշխարհագրական կոորդինատները, մասնավորապես՝ միջօրեականները: Պտղոմեոսի հաղորդած կոորդինատային տվյալների տարբերությունը հաշվարկելիս ստանում ենք, որ Սեւանա եւ Արսեսա լճերի կենտրոնով անցնող միջօրեականների միջեւ տարբերությունը կազմում է կես աստիճան, իսկ զուգահեռականների միջեւ տարբերությունը՝ երկու եւ կես աստիճան, ինչը գրեթե ճշգրտությամբ ներկայացնում է Սեւանա եւ Ուրմիո (Կապուտան) լճերի միջեւ եղած աշխարհագրական երկայնությունների եւ լայնությունների տարբերությունը: Պատահական չէ, որ թե՛ Ս. Երեմյանը եւ թե՛ Բ. Հարությունյանը պտղոմեոսյան Մեծ Հայքի՝ իրենց վերակազմություններում Արսեսան տեղադրել են Ուրմիո լճի տեղում, ընդ որում՝ Բ. Հարությունյանը լճի անվանումը նշում է («Պարսեսա» ձեռնով: Մեր կարծիքով՝ այստեղ գործ ունենք միջնադարյան հայ մատենագրության մեջ Ուրմիո լճի բավականին տարածված անվանումներից մեկի՝ Ադիի հունականացված ձեւի հետ:

Վերջաբանի փոխարեն: Այսպիսով՝ Կլավդիոս Պտղոմեոսի երկում հետաքրքրական կերպով ներկայացված են Մեծ Հայքի թագավորության նշանավոր լեռները, լճերն ու գետերը, որոնք, իր իսկ նշած սահմանագծերի հետ միասին, փայլուն հնարավորություն են ընձեռնում՝ պատկերացում կազմելու թագավորության ընդգրկած տարածքի եւ սահմանների վերաբերյալ: Ընդ որում՝ Պտղոմեոսի նկարագրած Մեծ Հայքի սահմանները հետաքրքրական ձեռնով տարբերվում են հարավ-արեւելքում Պլինիոս Ավագի նշած սահմաններից: Այստեղ Պտղոմեոսը հիշատակում է Տիգրանոսի քաղաքը: Գ. Սարգսյանի կարծիքով՝ Պտղոմեոսի հիշատակած Տիգրա-



«Ասիայի երրորդ փառքը»՝ ըստ Պտղոմեոսի

նոսմա քաղաքը համապատասխանում է Գողթնում Տիգրան Բ Մեծի հիմնած Տիգրանավանին: Ս. Երեմյանի եւ Բ. Հարությունյանի ուշադրությունից չի վրիպել այն հանգամանքը, որ Պտղոմեոսի հիշատակած Տիգրանավանի աշխարհագրական կոորդինատները չեն համընկնում Արցախի եւ Ուտիքի սահմանին Սեբեոսի հիշատակած Տիգրանակերտ ավանի կամ էլ Գողթնում Մովսես Խորենացու հիշատակած Տիգրանավանին: Բացի այդ՝ պետք է նկատել այն հանգամանքը, որ այս Տիգրանոսի հիշատակում է աշխարհների՝ Պտղոմեոսի առանձնացրած 4-րդ, այլ ոչ թե 1-ին խմբում (որտեղ էլ տեղ էին գտել Մեծ Հայքի հյուսիսարեւելյան աշխարհները), ինչը եւս ցույց է տալիս, որ սա չի կարող Գողթնի կամ Արցախի Տիգրանակերտ ավաններից որեւէ մեկը լինել: Ս. Երեմյանը եւ Բ. Հարությունյանը իրավացիորեն իրենց վերակազմություններում Տիգրանոսի տեղադրել են Ատրպատականի Տիգրանավանի տեղում:

Նման պայմաններում առաջ է գալիս այն հարցը, որ Ուրմիո լճի

արեւելյան ափին գտնվող ատրպատականյան հողերի մի մասը՝ ներառյալ Տիգրանավանը, պետք է ներառված լիներ Մեծ Հայքի թագավորության սահմաններում. մի իրավիճակ, որը Արտաշեսյաններից միայն Տիգրան Բ Մեծի օրոք է եղել: Փաստորեն՝ այստեղ իսկապես գործ ունենք Մեծ Հայքի Արշակունիների թագավորության սահմանների հետ՝ նոր, Պարթևստանից ներմուծված համակարգով: Բանն այն է, որ դեռեւս Տրդատ Ա-ի կառավարման տարիներից հայ Արշակունի արքաներն իրենց պարթև ավագ Արշակունիներից ստացել էին ձեռնական իշխանություն, այսինքն՝ արքայական անհատական ժառանգական տիրույթ, որը Փապստոս Բուզանդի եւ Ագաթանգեղոսի երկերում հանդիպում է Հայոց թագավորի ձեռական իշխանություն, Հայկական Ատրպատական, Ատրպատիճք եւ «Ձեռին իշխանության տունն թագավորի Հայոց» անվանումներով:

Ատրպատականի արեւելյան մասում Հայոց թագավորի ձեռական իշխանությունը կարելի՞ է համարել Մեծ Հայքի աշխարհների համակարգի մի մասնիկը, թե՞ ոչ: Սա

բավականին բարդ հարցադրում է, որն ունի պատասխանին հասնելու երկնտարանք. փաստորեն՝ սա մի կողմից Մեծ Հայքի թագավորության անբաժան մասն է, իսկ մյուս կողմից՝ առանձին կերպով չի թվարկվում աշխարհների շարքում: Նման պարագայում մենք հակված ենք կարծելու, որ սա իր կարգավիճակով սկզբունքային տեսանկյունից լիովին տարբերվող վարչամիավոր է եղել, որը կարող ենք պայմանականորեն «աշխարհ» անվանել: Սակայն պետք է ընկալել այն հանգամանքը, որ սա Հայոց թագավորների անհատական սեփականությունն էր, այսինքն՝ սա ոչ թե թագավորության մի վարչամիավոր է, որը թագավորը ղեկավարում էր որեւէ կուսակալի (ընդ որում՝ աստիճանաբար ժառանգական իշխանություն եւ հող ձեռք բերող) միջոցով, այլ բուն արքունի տիրույթ: Այն շարունակեց Մեծ Հայքի թագավորական կազմի մեջ գտնվել ընդհուպ մինչեւ 387 թ., երբ Մեծ Հայքի հռոմեա-պարսկական առաջին բաժանումից հետո դրանք հանվեցին Մեծ Հայքի կազմից եւ մտցվեցին Սասանյան Պարսկաստանի սահմանների մեջ:

Այսպիսով՝ Կլավդիոս Պտղոմեոսի «Աշխարհագրություն» երկում Մեծ Հայքի թագավորության վարչատարածքային բաժանումը ներկայանում է աշխարհների համակարգով՝ բաղկացած 20 աշխարհներից եւ առանձնահատուկ կարգավիճակ ունեցող թագավորական ձեռնական տիրույթներից: Փաստորեն՝ աշխարհները Մեծ Հայքում Արշակունիների գահակալմամբ ի հայտ եկած խոշոր վարչամիավորներ էին, որոնք էլ ներառում էին Պլինիոս Ավագի հիշատակած 120 ստրատեգիաները: Ըստ Եւրոպան՝ սա 2-րդ դ. կեսերի դրությամբ Մեծ Հայքի վարչաքաղաքական դրությունը ներկայացնող պատկեր է, որն անելայն հավանականությամբ՝ արտացոլում է Վաղարշ Ա Արշակունու գահակալման առաջին շրջանում առկա իրավիճակը: Ամենակարեւորն այն է, որ պտղոմեոսյան տեղեկությունները փաստում են, որ Մեծ Հայքը Հին Աշխարհի պետությունների թվում հսկայական տարածք զբաղեցնող եւ հետեւապես Էսական դերակատարություն ունեցող երկրներից մեկն էր:

Միջայել ՄԱԼԿԱՍՅԱՆ



Վաստակաշատ գրող, հրապարակախոս Վաչագան Սարգսյանն ընթերցողի գրասեղանին է դրել «Ի լուր եւ ի տես համայնի» խորագրով ուշագրավ ժողովածուն: Ժամանակագրական առումով այն ներառում է 1974-2014 թթ. ընթացքում հեղինակած կարեւորագույն կյուրերի ընտրանին:

Նախաբանում անվանի արձակագիր Հրաչյա Մաթեոսյանը (Հրաչօ) պատկերավոր կերպով բանաձևում է, որ սա գիրք չէ, սա տուն է՝ Վաչագան Սարգսյանի կառուցած բազմաթիվ տներից մեկը. «..... չեմ ասի՝ ամենալավը, որովհետեւ լավից լավն է լինում: Բայց ասում եմ՝ մեր ժամանակներին վայել գիրք-տուն է: Վստահորեն ձեզ ասում եմ՝ համեցեք, մտեք այդ տունն այնպես, ինչպես կմտնեք ձեր հայրական օջախը»:

Ժողովածուն ծայրից ծայր ապրում, շնչում է հայկական իրականությանը բնորոշ բռնկուն մտահոգություններով, հոգսերով ու հիմնախնդիրներով, անկեղծ տազնապնդում ու ազնվաբորբոք անհանգստություններով: Մեծ ու փոքր շատ ու բազում հիմնահարցերի շուրջ են պտտվում գրողի խոսքն ու ձայնը:

Վ. Սարգսյանը հատուկ, այրող խոսք է ասում հայ հասարակության պատիվն ու ինքնությունը խեղաթյուրող, հայրենիքի եւ ժողովրդի հավաքական դիմանկարն աղճատող անձանց ու երեւույթների հասցեին: Հայրենյաց հոգեւոր ու կյութական հարստությունը մախողներին նա համարում է գիշատիչներ: Ովքե՞ր են դրանք, որտեղի՞ց են եկել: Ոչ մի տեղից, «մեր միջից են դուրս եկել,

Ի լուր եւ ի տես համայնի...

մեր շահասեր հոգու թունավոր պտուղներն են, որ թունավորում են մեր կյանքը»,- ասում է գրողը: Նա առհասարակ քարկոծում է շահամուլներին եւ շահասերներին՝ վերջիններիս համարելով... ողորմելիներ. «Ողորմելի է սա, երբ պոռնոկոստերնետով դեռահասներին պոռնո է եւ դրանով պիղծ է Ողորմելի է սա, երբ կանաչ ալիքն կտրում է ու սարքում ոռոտողի, եւ դրանով ոռոտվի է: Ողորմելի է սա, երբ ազգային կրթությունը օտարին է ստորադասում, եւ դրանով ստոր է: Ողորմելի է սա, երբ ազգային շահը իր կուսակցական շահից նսեմ է համարում, եւ դրանով նսեմ է»:

Գրողը նրբին հուժմորով հեզկում է Հայաստանում «բետոնապատմական առաջընթացի» իրականացողներին՝ վերոնշյալ հասկացության ներքո ընդգրկելով բոլոր անտրամալ բարքերն ու երեւույթները: Սուր քննադատության սլաքն ուղղված է բոլոր նրանց դեմ, ովքեր իրենց տգիտությամբ, ցինիկությամբ, անբարո պահվածքով թունավորում, այլասերում են հասարակական միջավայրն ու մթնոլորտը: Հեռուստատեղեկիս ուղղված քննադատությունը ամփոփված է «Հեռուստադեռն» խորագրով հրապարակման մեջ:

Մեծ ու տարողունակ է Վ. Սարգսյանի ասելիքը: Եվ այդ ասելիքը ներծծված է հայրենի հողի տաք բույրերի, հայրենյաց կապույտ երկնքի բացվող առափուտների անզուգական մաքրությամբ ու թարմությամբ: Նա համոզիչ է դարձնում իր խոսքն անկեղծ ուժով, վարակիչ պաթոսով, հայրենասիրության իրական լիցքերով:

Նրա համար եւս Հայաստանը լույս այսօրվա հանրապետությունը չէ, որ մի բարձր տեղ կանգնեւ, եւ սահմանները երեսն: Ո՛չ: Փոքր չէ Հայաստանը: Այն ձգվում է աշխարհի լայնքով ու երկայնքով, որտեղ հայությունն կա, հայ միտք ու հայ հոգի՝ Կանադայից մինչեւ Մայրավանք, Աթոռնիենցից մինչեւ Զարահունք, Երուսաղեմից մինչեւ Խոր վիրապ: Հայության եւ հայրենիքի ճանապարհներով անցնելիս գրողի շնչառությունն այսպես ու այս զմայլանքն է արձանագրում. «Մայրավանքը տեսանք հեռվից, անչափ դժվար էր գնալը, բայց այդ գնալը ճշմարիտ աղոթքի պես էր դժվար, եւ սրտաբուխ աղոթք էր, եւ ճանապարհը սեր էր բացում, եւ հայրենիքը այդ ճանապարհով լցվում էր մեր մեջ: Չէ՛, մեր հայրենիքը խորք ունի, իջնում է դեպի երկիր եւ բարձրանում երկինք, եւ անչափելի է մեծությունը նրա»:

Վ. Սարգսյանը հայոց պատմության ճանապարհներով իր ուխտագնացությունն ավարտում է խորհրդանշական սույն պատկերավորությամբ. «Իջնում ենք, վերադառնում ենք Մայրավանքից, մեր հետ իջնում են, մեզ հետ գալիս են հազարամյայնների ու գիհիները, գույնզգույն տաք աշունը, պարմանիների ու պարմանուհիների սրտների խլրտոցները. ամեն ինչ գալիս է մեզ հետ, մեր սրտերի մեջ է հայրենիքը»:

Իր այս ժողովածուով Վ. Սարգսյան հայ անհատը եւս մեկ անգամ, նորից ու նորեն հավաստում է իր անբեկանելի սերն ու նվիրվածությունը հայրենի երկրի, նրա հազարամյա սրբալույս արժեքների ու հայ մարդու հանդեպ:

Արմեն ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Պատմական գիտ. թեկնածու

«ԾՈՔԻ ՄԱՐԴՈՒՄ» ԴՐԱՄԱՆ ԵՐՈՒՄԱՆԻ ԵՎ ՆՎԱՐԲ ՈՇԱԿԱՆԻ ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐՈՒՄ

Սկիզբը՝ թիվ 3-4

Եթե Օշականն իր խոսքը մեծ մասամբ սկսում է բնության որեւէ տեսարանի նկարագրությամբ՝ հասնելու համար հերոսի ներաշխարհին, ապա Երուխանի գործերում ընթերցողը հենց պատմվածքի սկզբում արդեն գլխի է ընկնում, թե հերոսները սոցիալական ինչ ծագում ունեն։ Բառերն ու արտահայտությունները, ինչպես՝ «առանց գուլպայի կարմրած ոտքեր», «փետրված շալ մը» («Յյուծախտավորը»), «հագարավոր կարկատաններ», «քուրջերու մեջ պլված փաթեկած ողորմ զանգված մը» («Պապուկը»), օգնում են հերոսների անօգնական վիճակը հասկանալու։ Այս ամենին գումարվում է (հիմնականում կանանց կերպարների դեպքում) նաեւ փնթի, թափփված վիճակի նկարագրությունը, եւ ստացվում են խղճահարություն հարուցող, հեղինակի բառով ասած՝ «գթություն եւ արգահատություն հրավիրող» կերպարներ։ Կան պատմվածքներ, որոնցում առկա նատուրալիստական պատկերները, ինչպես Երուխանն է բնորոշում՝ «զագիր տեսարան»-ներն ուղղակի սահմանակցուցիչ են, եթե չասենք՝ նողկալի։ Օրինակ՝ «Աղի՛ք, օ՛հ, տեսնելու էր զինքը իր աղիքներուն հետ. դաստակեն ու մատներեն վար կախված էին անոնք, թաց, կակուղ, լարծուն, օձի պէս իրար փաթաթված, խառնված, անծայր, անվերջ գալարվածք մը

մսի, արյունի, փորոտիքի» («Յամրին վրեժը»), կամ՝ «Ու անողորմ քարը կրկնեւ ծուկը, արյունին տեսքովը հագեցնելով մոլեգին աղջիկը» («Ծովափին աղջիկը»)։ Այս պատկերները կարծես վկայությունն են 80-ականների գրական առաջնորդ Ար. Արփիարյանի կոչի հետեւորդը լինելուն, այն, որ գրողները պետք է «ուսումնասիրեն մեր ամեն խավերու ցավերն ու վշտերը, տխրեանա՞ց վրձինով մեր աչքերուն առաջ պատկերացնեն տարաբախտությանց նկարները, մեզի վկա անեն մինչեւ իսկ ժանտատեսիլ տեսարաններու» (մեջբերումը միջնորդավորված է՝ *Լիլիթ Ստեփանյան, Երուխան, Եր., 2007, էջ 13*)։ Պատմվածքներում կան հատվածներ, որոնց զագրեկության աստիճանը նեկայացնելը դժվար է եղել նաեւ գրողի համար։ Այն, ինչը բառերով դժվար էր ներկայացնել, բացահայտվում է դրան անմիջապես հաջորդող կարճ բնութագրությամբ։ Ահա այս հատվածներում էլ երեւում է Երուխան գրողի վարպետությունը։

Յոգեբանական վիճակների քննությունից առաջ Օշականը բավականին տեղեկություններ է հաղորդում հերոսների մասին՝ միաժամանակ ներկայացնելով այն միջավայրը, որտեղ նրանք ապրել են ձեռավորվել են։ Ու թե՛ն աղքատ ու որբ, բայց պայծառ ու մաքուր մի բան կա նրանց եության



մեջ։ Նրանք կյանքով լեցուն են, օժտված՝ բնության գեղեցկություններն ընկալելու եւ գնահատելու կարողությամբ։ Սակայն Երուխանը պատկերում է աղքատության մեջ խեղդված մարդկանց, եւ եթե նա ներկայացնում է բնապատկերներ, ապա միայն ու միայն՝ սոցիալական սուղ վիճակը ցույց տալու համար։ Երուխանի կերպարների մեջ, սակայն, կարելի է առանձնացնել կերպարներ, որոնց մեջ ծանր կենցաղը ոչ միայն չէր մեղցրել ապրելու տենչը, այլեւ զարգացրել էր ճարպկություններ, «հուժկու մարմին մը եւ անկուն հոգի մը պատրաստած էր» (*Երուխան, Երկեր, Եր., 1980, էջ 395*)։ Թշվառությունն ու միայնությունը բնավ պատճառ չէին, որ կյանքը տաղտկալի լիներ («Լվացարարուհին», «Յյուծախտավորը»)։ Այս վիճակը շարունակվում է այնքան ժամանակ, մինչեւ սիրած էակը

դադարում է իր գոյությամբ պատվար հանդիսանալ։

Իրենց պատմվածքներում Երուխանն ու Օշականը բացահայտում են մի ճշմարտություն. այն, որ կյանքը սիրում է ընկճվողներին, չնահանջողներին, պայքարողներին, ինչպես Երուխանն է ասում՝ «աղոտությանը հաղթողներին»։ Այս ամենը լավ երեւում է հերոս-հասարակություն կապի ուսումնասիրությամբ։

Ինչպես տարբեր են մարդիկ, այնպես էլ տարբեր է նրանց վերաբերմունքը խոնարհների նկատմամբ։ Ու քանի որ նրանցից շատերը «խելքով թեթեւ ծնածներ» էին, ոմանց ներկայությունը «զվարճության շարժառիթ մը եղած էր» մարդկանց համար («Կուզը», «Պաղտո», «Տոգասանը», «Յորքուր Վարդան»)։

Հասարակությունը տարբեր կերպ էր ընդունում նաեւ ֆիզիկական արատ ունեցողներին. ոմանք խորշում են նրանցից, ոմանք՝ կարեկցում։ «Բարեսիրտները «մարդուկ» կանվանեին զայն, իսկ չարածնիները՝ «խամպուռ» («Պապուկը»)։ Հասարակության մեջ գտնվում են «մի քանի գթոտ սիրտեր», որոնցից Կուսիկը կարողանում է գումար «փրցնել» եւ նպարեղենի խանութ բացել։ Այդ դեպքում եւս կարեկցում են նրան եւ նրանից են առելու արժեքը։ Եվ հենց այս նույն մարդկանց վերաբերմունքն էլ ստիպում է կամ մոռանալ արա-

տի գոյությունը, կամ ավելի ուժգին զգալ նրա հասցրած ցավը։

Օշականի հերոսներին գյուղը կնքում էր տարբեր անուններով՝ հիմնականում ըստ որեւէ աչքի ընկնող թերության («Տոգասան»՝ ծուլության, «Մատմազել Եվա»՝ փետրագարդ գլխարկ կրելու, «Յորքուր Վարդան»՝ կանանց թեւողամարդկանց «հորքուր» անվանելու պատճառով եւ այլն)։ Գյուղացիների վերաբերմունքն այս մարդկանց նկատմամբ ուներ նաեւ այլ բացատրություններ. օրինակ՝ գյուղի ժամկոչը համարվում էր բոլորի եղբայրը, հետեւաբար ընդունելի անձ էր, կանայք չէին վախենում նրանց հետ միայնակ մալուց, բոլոր դռները բաց էին գաղթականների առջեւ, հարգանքով էին վերաբերվում խենթերին՝ նրանց մեջ տեսնելով վերին ուժերի կամքը եւ այլն։ Օշականի «քոքուրները», ապրելով մարդկանցից անշատ, խուսափելով մարդկանցից, մեկուսանում են։ Կյանքի այս կերպը մարդկանց աչքում ավելի է ընդգծում նրանց թերությունը։ Սակայն զբաղմունքի բերումով ոչ բոլորն են խուսանավում։ Չբաղմունքը շատերին թույլ է տալիս փոխել բնավորության ինչ-ինչ գծեր, հիմնականում արհեստում, հաղթահարել վախն ու անհամարձակությունը, լինել պատվախնդիր։ Կան մի քանի պատմվածքներ, որոնցում առավել, քան մյուս պատմվածքներում, բացի հասարակության վերաբերմունքից, երեւում է «քոքուրների»՝ միմյանց նկատմամբ հոգատար վերաբերմունքը («Մաղաքը», «Համբուրի» մը պատմությունը», «Տոպիճը»)։

Շարունակությունը՝ էջ 7

Թոնդրակյան շարժումը եւ նրա դարագլուխներին դասադարձող գեղարվեստական համադասկերը Նովի. Շիրազի «Թոնդրակեցիները» դոգմում

Սկիզբը՝ էջ 4

- Էդ որ Շիրազի ձեռագրերն էլ անգիր գիտես՝ լավ է, բայց ասա՝ ուրիշ ի՞նչ անտիպ գործեր ունի։ Ես էլ խոսեցի «Թոնդրակեցիների» մասին։ Ասաց։

- Բայց Վահագն Դավթյանը գրել ու տպել է արդեն։

- Սակայն դրանք նույն թեմայով գրված, նույն դարաշրջանը տարբեր դիտանկյուններից, տարբեր մոտեցումներով պատկերող բոլորովին տարբեր ստեղծագործություններ են,- ասացի,- եւ Շիրազը Վ. Դավթյանի պոեմի տպվելուց հինգ տարի առաջ է գրել, նրանք տպել են, իսկ Շիրազինը՝ ոչ։ Եվ որպեսզի պատկերացնի՝ ի՞նչ է պոեմը, նրանից ցայտում ու տպավորիչ մի քանի դրվագ հիշեցրի։

Հրատարակչության տնօրենը շշմեց, զարմացավ եւ վճռեց.

- Այսօր արդեն ուշ է, հենց վաղը եւեթ Շիրազին կկանչեմ։ Տեսնում ես՝ կանչել է։

- Դե որ այդպես է,- ասաց Շիրազը,- ինչպես ժամանակին «Հայոց դանթեականը» պոեմս կարողացիր տպագրության հանձնելուց առաջ, այդպես էլ խաթերս համար կարդա «Թոնդրակեցիները»։ Միայն մի վերջին անգամ թող նայեմ ու մի քանի օրից քո դատաստանին կհանձնեմ։

- Սիրով կսպասեմ զանգիդ,- ասացի։

Մարտի 7-ին զանգահարել էր մեր տուն, որ գնամ վերցնեմ։ Աղջիկս ասաց՝ Շիրազ պապիկն էր զանգել, իսկ դու տանը չէիր։ Մտածեցի՝ թող Կանանց տունն անցնի, մարտի 9-ին կգնամ



կվերցնեմ։ Բայց այդ օրն արդեն ծանր կաթվածը մահացու շանթել էր բանաստեղծին։

Վախճանվեց մարտի 14-ին, հուղարկավորեցին 17-ին։

2.

Ընթերցողին այսօր կարող է հետաքրքրել, թե ինչու 1954 թ. գրված եւ 1970-ին լրամշակված, վերջին անգամ 1984-ին վերանայված շիրազյան այս պոեմը, որ կազմում է շուրջ 11 000 չափատող եւ շուրջ 300 էջ, ո՛չ խորհրդային ժամանակներում, ո՛չ էլ Հայաստանի անկախության տասնամյակներում տպագրվելու բախտին չի արժանացել, եւ միայն այսօր՝ գրվելուց վաթսուս եւ բանաստեղծի մահից երեսուն տարի հետո է կատարվում նրա՝ «Դանթեականի» պես կարդալու՝ մեզ ուղղված պատվեր-հանձնարարականը։

Պատճառները տարբեր են երկու ժամանակների համար էլ։

Խորհրդային ժամանակներում՝ Յովի. Շիրազի այս ստեղծագործության տպագրությունը մերժելուց հինգ տարի հետո՝ 1959-ին, հրատարակվեց եւ 1961 թ. վերամշակվելով տպագրվեց Վահագն Դավթյանի «Թոնդրակեցիներ» պոեմը։

Ամենեւին էլ այդ պոեմը թերագնահատելու, առավել եւս հակադրելու կամ նսեմացնելու միտում չունեց, բայց եւ չենք կարող չասել, որ հայոց պատմական անցյալը գեղարվեստականցելու ներքին բուռն ձգտում ունեցող տաղանդաշատ բանաստեղծի պոեմը անսանձ մի գովերգություն է խորհրդային գաղափարախոսությամբ իդեալականացված Սմբատ Չարեհավանցու, նրա համակիրների եւ Հայոց երկիրը քանդող ու ավերակող,

փլված եկեղեցիների տեղը «վեցկե եզներով վարած» թոնդրակացյալ ապագային խառնամբոխի։

Մեր պատմության այդ ժամանակահատվածի ու մանավանդ թոնդրակյան շարժման եության մասին, թեկուզեւ գնահատելի արժանիքներով, այդ օրերում ստեղծվել էր պաշտոնական տեսակետը պաշտպանող գեղարվեստական երկ, որի համար դժվար է խստորեն մեղադրել հեղինակին։ Իսկ Յովի. Շիրազի՝ հայապահպանական ու պահանջատիրական սուր հարցադրումներով, հայոց ոգու եւ եության խորքային բացահայտումներով, պատմական Հայաստանը նոր սերունդների հիշողության մեջ վերականգնողականորեն ու նյութականացնող ստեղծագործությունները չէին կարող տպագրվել։

Հայոց ցեղասպանության, Մեծ եղեռնի իրողությունը պետական նպատակասլացությամբ թաքցվող՝ թե՛ Խորհրդային Հայաստանի ու Սփյուռքի հայությանը, թե՛ համայն մարդկությանը իրագեկող եւ ոճրագործ թուրքիային համաշխարհային դատաստանի ներկայացնող «Հայոց դանթեականը», «Անի», «Թոնդրակեցիները» պոեմների տպագրությունն անկարելի էր՝ զուտ գաղափարական-քաղաքական պատճառներով։

Իհարկե, Յովի. Շիրազը թոնդրակեցիների համակիրը չէր եւ նրանց ներկայացնող պոեմը գրել է ոչ թե փառաբանելու, այլ հիմնականում նրանց հակազգային գործունեությունը գեղարվեստո-

րեն ցուցադրելու եւ սերունդների առջեւ դատապարտելու նպատակով։

Ամբողջ պոեմի ընթացքում նա պատկերավոր հզոր խոսքով ցույց է տվել թոնդրակեցիների հակահայ եությունը, նրանց մասին ասել այն, ինչ մտածում էր պատմական սկզբնաղբյուրներից քաղած տեղեկությունների թելադրանքով եւ դա չափած շարադրում էր ընթերցողի համար էլ միանգամայն ըմբռնելի ու հասկանալի։

Սակայն եկեք հասկանանք խորհրդային դարաշրջանում ապրած ու ստեղծագործած հեղինակին. հոսանքի ուղղությամբ ընթացող գրողը որեւէ խոչընդոտ չունեց։ Իսկ ազգապահպան մի կարեւոր գաղափար, հայոց լեզվի հավերժության կամ հայ դատի ու պահանջատիրության ուղղությամբ մի կարեւոր միտք գլավիտի մաղով անցկացնելու համար անգամ Յովի. Շիրազը էր հարկադրված տեղ-տեղ դիմելու «դիվանագիտական» չարդարացվող շեղումների եւ ցուցադրական որոշ համակրանք արտահայտելու ոչ սիրելի թոնդրակեցիների հանդեպ՝ հուսալով գոնե այդպիսով ճանապարհ բացել պոեմի տպագրության համար։ Բայց նա, ի տարբերություն եւ հակառակ ժամանակի պաշտոնական պատմական ու բանասիրական գիտության, իր պոեմում թոնդրակեցիների եության եւ նրանց տիրապեղան շարժման մասին անթաքնելի ասել էր ողջ ճշմարտությունը թե՛ նրանց իսկ խոսքով, թե՛ նրանց բանադրող-դատապարտող պետական ու հոգեւոր այրերի։

Շարունակելի
Սամվել ՄՈՒՐԱԴՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր,
պրոֆեսոր

Սկիզբը՝ թիվ 3

«Անխնա ինքնաքննությունը», որի մասին միշտ խոսում էր Արծրունին, Ասիացու ֆելիետոններում եւս սկսում է անուղղակի արձագանք ստանալ: 1875 թ. հենց առաջին համարում նա «ծաղրում» է «Մշակ»-ին այն բանի համար, որ համարձակվում է գրել իրականի, գոյություն ունեցողի մասին, մինչդեռ հարկավոր է ընդամենն զբաղվել ինքնախաբեությամբ. «Ամոթ ձեզ «Մշակ»-ի խմբագրությունն եւ այ. խմբագիր... կարելի՞ է արդյոք մեր հասարակության մեջ եւ մեր ժամանակում, երբ որ ամեն մարդ ցույց է տալիս այն, ինչ որ չէ,- դուք ցույց եք տալիս միամիտ կերպով այն, ինչ որ եք... Ի՞նչ կասեն կարդացողները...» (1875, հ. 1): «Մշակ»-ի նման քաղաքականությունը Ասիացուն «տարակուսանքի» մեջ է գցում, որովհետեւ այդ կերպ լրագիրը «սխալ» ուղղություն է ցույց է տալիս ընթերցողին՝ նպատակաուղղելով նրան դեպի ինքնաճանաչություն, սխալների ուղղում ու ըննադատություն: Բայց ֆելիետոնիստը ցավով նկատում է, որ բոլորը հարձակվում են «Մշակ»-ի վրա, որովհետեւ վերջինս հանդգնել է քննել «հնամուլ կարծիքներ, պապական վնասակար ավանդություններ, արմատացած նախապաշարմունքներ»: Ասիացին առանձին դեպքերում չի էլ խորշում բացահայտ նշելուց (1875, հ. 32), որ ստանձնում է «Մշակ»-ի պաշտպանությունը: Ընդհանրապես, այս համարի ֆելիետոնն ավելի շատ հիշեցնում է հրապարակախոսական ուղղակի բանավեճ հակառակորդ լրագրերի եւ նրանց խմբագիրների դեմ: Այս դեպքում Արծրունին, չդիմանալով գայթակղությանը, ամբողջովին դուրս է գա-

ՖԵԼԻԵՏՈՆԻ ԺԱՆՐԸ «ՄՇԱԿ» ԼՐԱԳՐԻ ԷՋԵՐՈՒՄ (1870-1890-ական թթ.)



լիս ժանրի սահմաններից՝ գերազույց նպատակ դնելով ոչնչացնել «Մեղու», «Մասիս» պարբերականները: Ֆելիետոնի առանձին հատվածներում նա, եվրոպական ու ռուսական մամուլի, գրականության օրինակներով, իր ընթերցողին ուզում է հավատացնել, որ ինքը «կուպիտ» չի գրում (օրինակ է բերում Մովսիսի, Շեքսպիրի ստեղծագործություններում հանդիպող «մարդուն կարմրեցնող» խոսքերը): Սակայն փաստն այն է, որ այստեղ Ասիացին գործածում է շատ վիրավորական բառեր ու արտահայտություններ (Չմյուռնիայի «Արշալույս Արա-

րատյան» լրագրի խմբագրին անվանում է «բթամիտ գլխով բթամիտ պատասխաններ եւ հիմարություններ ասող» մարդ): Չմոռանալ, որ 1873-ին հենց ֆելիետոնիստ Արծրունին էր պարծենում, որ, ի տարբերություն մյուս լրագրերում հանդիպող ֆելիետոնների, միայն ինքն է պահպանում կոռեկտության սահմանները՝ քննադատվողների հասցեին երբեք թույլ չտալով անձնական վիրավորանքներ: Առհասարակ, 1875 թ. գրեթե բոլոր ֆելիետոնները մի տեսակ նահանջ էին (գոնե ժանրի սահմանները խախտելու տեսանկյունից) ֆելիետոնիստ Արծրունու

համար, քանի որ նա ոչ միայն չպահպանեց պահանջվող չափանիշները, այլև նախկինում հանդիպող փոքրիկ, սրամիտ ու կարճ պատմությունները փոխարինեց միագիծ, երկարաշունչ, վերլուծական հոդվածների նմանվող երկերով: Ասվածի վկայությունն է նաեւ նույն թվականի հ. 35-ում տեղ գտած ֆելիետոնը, որը վերնագրված է Վ. Յուզոյի «Թշվառներ» վեպի հերոսներից մեկի անունով՝ «Ժան-Վալթան»: Ասիացին, նախապես հայցելով եւ Յուզոյի, եւ իր ընթերցողների ներողամտությունը, նշանավոր վեպի հերոսին «վերակառուցում է ավարտին է հասցնում»՝ իր գրական սկզբունքների ու պատկերացումների համաձայն: Անկասկած, հենց հիշատակված եւ նմանատիպ թույլ ֆելիետոններն էին հիմնական պատճառը (նաեւ անձնական վերաբերմունքը), որ «Մշակ»-ի նախկին աշխատակից Ա. Շիրվանզադեն Արծրունու ֆելիետոնները համարի ոչ սրամիտ՝ համեմատության մեջ դնելով «Արձագանք»-ի խմբագիր Աբգար Յովհաննիսյանի գրած ֆելիետոնների կողքին. «Նա (Աբգար Յովհաննիսյանը - Ա. Գ.) գրում էր միայն (այն էլ ոչ ամեն շաբաթ) զավեշտական ֆելիետոններ, եւ գրում էր, տեղն է ասել, բավական սրամիտ, **համենայնդեպս ավելի հաջող, քան «Մշակ»-ի Ասիացին**» (ընդգծ. - Ա. Գ.) (**Ա. Շիրվանզադե**, Կյանքի բովից. Յուշեր, Եր., 1982, էջ 140): 1878-ի առաջին ֆելիետոնում հեղինակը, մի տեսակ, բացատրություն ու պարզաբանում է տալիս ընթերցողին՝ հավատացնելով, որ ֆելիետոնիստ լինելը

բավական դժվար է: Նա հավատացնում է, որ «ինստուն եւ ինս պրոցեստ չարություն եւ մեկ պրոցեստ սրամտություն» ունենալով չէ, որ մարդ պետք է ֆելիետոն գրի: Ակնհայտ է, որ խմբագիրն իսկապես արդարանալու փորձեր է անում՝ շեշտելով նաեւ այն ոչ բարենպաստ պայմանները, որոնք խանգարում են մեր իրականության մեջ լավ ֆելիետոններ գրելուն. «Եկեք ֆելիետոն գրեցեք, կծու, չար, ծիծաղաշարժ, թեթեւ սիրելի ֆելիետոն գրեցեք այն հասարակության մեջ, որտեղ ձեր չորս կողմ ուրիշ բան չէք տեսնում, եթե ոչ զգվելի, սիրտը խառնող երեւույթներ» (1878, հ. 1): 1879-ն Ասիացին սկսում է ավելի սրամիտ ֆելիետոններով: Յենց առաջին ֆելիետոնը (հ. 3) ամբողջովին բաղկացած է մի քանի տողանի անջատ մտքերից, որոնք իրար հետ որեւէ առնչություն չունեցող երեւույթների վերաբերյալ դատողություններ են: Այս դեպքում անվիճելիորեն շահել է Արծրունու գրածը, մանավանդ որ առանձին երեւույթներ հեղինակը երգծում է շատ դիպուկ եւ տեղին: Բազում «բարեմաղաքներ» առանձնանում են հատկապես Պ. Պոռչյանին եւ Գ. Սունդուկյանին վերաբերող պարբերությունները: Երկու դեպքում էլ ընտրված են հեղինակների ամենախոցելի կողմերը. «Պերճ Պոռչյանցին ցանկանում եմ այնքան երկար րոմաններ գրել, որ ոչ ոք համբերություն չունենա նրա գրվածները մինչեւ վերջ կարդալ» (1879, հ. 3):

Շարունակությունը՝ էջ 8

«ԾՈՔԻ ՄԱՐԴՈՒ» ԴՐԱՄԱՆ ԵՐՈՒՄԱՆԻ ԵՎ ՆԱԿՈՒԲ ՈՇԱԿԱՆԻ ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐՈՒՄ

Սկիզբը՝ էջ 6

Գրականագետ Կ. Աղաբեկյանը գրում է. «Օշականի, ինչպես բոլոր երկերի, այնպես էլ «Խոնարհները» շարքի պատմվածքների հերոսները իրական մարդիկ են, ճշգրիտ հասցեներով, հայրերով, պապերով» (*Կիմ Աղաբեկյան, Յակոբ Օշական, Եր., 2006 թ., էջ 62*): Իր «Համապատկեր արեւմտահայ գրականութեան» աշխատության մեջ այս մասին Օշականը եւս գրում է. «Այս շարքը բացառապես գիւղէն կ'առնէ ոչ միայն տիպարները, այլեւ՝ հոգին» (3. *Օշական, Համապատկեր արեւմտահայ գրականութեան, հ. 10, 1982, էջ 108*): Գրականագետ Յ. Յակոբջանյանը, խոսելով Երուխանի՝ ստորին խավերի կյանքը պատկերելու համոզականության մասին, գրում է. «... գրողը ներքին ամուր կապով կապված է այդ դասերի մարդկանց, ծանոթ է նրանց նկարագրին» (*Յակոբ Յակոբջանյան, Երուխան, Գյումրի, 2003, էջ 72*): «Խոնարհներ» նկատմամբ Երուխանի եւ Օշականի ընդգծված դրական վերաբերմունքի պատճառը գուցե այն է, որ նրանցից շատերի «բնորոշները» ծանոթ էին իրենց, շատերի ցավին ականջալուր էին եղել, մոտիկից ճանաչել էին նրանց, կարողացել էին հասկանալ իրեն արհամարհված զգացող մարդու ցավը, սերերը, երազները: Գուցե: Բայց վստահորեն կարող ենք ասել, որ կերպարների մեջ երեւում են Երուխան եւ Օշական մարդարվեստագետները, նրանց վերաբերմունքը կյանքի եւ մարդկանց նկատմամբ: Հատկանշական է նաեւ այն, որ Երուխան գրողի վերաբերմունքն իր կերպավորած հերոսների նկատմամբ թաքցված է, Օշական գրողին՝ ակնհայտ: Օրինակ՝ Երուխանի «Պապուկը» պատմվածքում ցնցո-

տիներով պատված երկու տարեցների հանդիպմանը ականատես մարդկանց վերաբերմունքն ամփոփվում է մեկ նախադասությամբ. «Սրտաշարժ բան էր տեսնել այդ երկու խղճուկ եւ թառամած եակներու միմյանց հանդիպումէն առաջ եկած վայրկենական ոգեւորությունն ու վաղանցուկ տազնապը...» (*Երուխան, Երկեր, Եր., 1980, էջ 372*): Խոսելով Երուխանի արվեստի առանձնահատկության մասին՝ Յ. Յակոբջանյանը գրում է. «Յեղիակի թաքնված վերաբերմունքը դրսևորվում է հույզի, մանրամասնի, համակրանք-հակակրանքի մեջ, սրանք այն կարեւոր բաղադրիչներն են, որոնք մտահղացումը ուղղորդում են նպատակին» (*Յակոբ Յակոբջանյան, Երուխան, Գյումրի, 2003, էջ 50*): Ուսումնասիրելով Երուխանի եւ Օշականի հերոսների ներաշխարհի դրաման՝ հասկանում ենք, որ այս կերպարներն առանձնանում են մարդկային հոգու կրած մեծ տառապանքի, այդ տառապանքն ավելի ու ավելի խոր զգալու կարողությամբ: Բայց իրենց վիճակի եւ ապրելու կերպը փոխելու քայլեր գրեթե չեն անում ու եթե նույնիսկ անում են, ապա դրանք հիմնականում անհամարձակ եւ վախկոտ քայլեր են ստացվում: Այստեղից էլ պարզ է դառնում Օշականի ընտրած վերնագիրը՝ «Խոնարհները», որը հավասարապես կարող է վերաբերել նաեւ Երուխանի և՛ օվելաշարին: Այս երեւույթն առաջին հայացքից կարող է դատապարտելի թվալ, որովհետեւ ով չի կարողանում պայքարել կյանքում, բողբոջ ձայն բարձրացնել նրա դեմ, ապա նա ապրելու իրավունք չունի: Նրանց խեղճությունը մարդկանց մեջ կարող է ծնել միայն խղճահարություն, որից էլ կամաց-կամաց ծնվում է անտարբերությունը: Սակայն «քո-

բուրներն» իրենց թշվառ ու խեղճ վիճակին, սեփական անձի նկատմամբ հասարակության արհամարհանքին ընտելացած էին, որովհետեւ մանկուց, դեռ աչք չբացած, տակավին վեր չբարձրացած են ենթարկվել ճակատագրի ծանր հարվածին ու վար գլորվել: Իսկ մանկության եւ պատանեկության տարիները շատ կարեւոր են մարդու հետագա ձեւավորման համար: Յենց սրանով էլ Օշականն արդարացնում է «քոքուրների» այս վարքագիծը, դրա պատճառը համարում դառն մանկության տարիները, «որոնց մեջ մարդը, ապագա մարդը կշինվի, եւ ուր կերտված մարմինը իր կնիքը կուտա մարդուն մնացած օրերուն» (*Յակոբ Օշական, Երկեր, Եր., 1979, էջ 30*): Երուխանի՝ հասարակության խոնարհ խավերից ընտրված հերոսներին նույնպես հատուկ է կյանքի ծանր հարվածներին համակերպվելու բնավորությունը: Ծիշտ է՝ նրանք երբեմն բողբոջում են, բայց այդ բողբոջը շատ հաճախ միայն խուլ արձագանք է դառնում, չի վերաճում ըմբոստության եւ պայքարի: Սրանով երկու գրողներն էլ կարծես փաստում են վաղուց ապացուցված մի ճշմարտություն. այն, որ մարդն իր միջավայրի ծնունդն է եւ իր վրա կրում է այդ միջավայրի կնիքը: Հակադրվել այդ միջավայրին կարող են լոկ ուժեղ անհատները:

Այս ամենով հանդերձ՝ գրողներն առանց շղարշի, միանգամայն բնականոն եւ ընդունելի ընթացքով ամբողջացնում են դիմացինին ավելի լավ հասկանալու, մարդկային հոգու եւ բնության գեղեցկությունները սովորական մարդկանցից ավելի լավ ընկալելու հատկանիշներով օժտված խոնարհների կերպարները, նրանց վերաբերմունքը մարդկային վեհ եւ գնահատելի



հատկանիշներ՝ անձնագիտություն, գթասրտություն, խոնարհություն: Ծիշտ է՝ նրանք խեղճ են հոգով, ժուժկալ՝ իրենց պահանջմունքներում, բայց եթե սիրում են, սիրում են ողջ եւությանը՝ անտեսելով սեփական անձը, եսը, նույնիսկ՝ ինքնասիրությունը: Որքան էլ հասարակության կողմից արհամարհված, «խոնարհները» պահպանում են մարդկային գնահատելի հատկանիշները: Ուսումնասիրելով Երուխանի «Կյանքին մեջ» եւ Օշականի «Խոնարհները» ժողովածուների հերոսների ներաշխարհի դրաման՝ հասկանում ենք, որ խոնարհները «թեթեւ ծնած»-ներն են, թշվառ վիճակից դուրս գալու ելքեր չգտնողները, բարբերին ու սովորություններին զոհ գնացողները, ցավին ու տառապանքին դիմադրել չկարողացողները... Ուրեմն «քոքուրներ» ոչ միայն ծնվում են, այլեւ՝ դառնում:

Մարինե ՂԱԶԱՐՅԱՆ

Հարուդ Բոնդը (Բոնդուխյանը) ԵՆ ՄՐԱ ԴՈՆԵՂԻԱՆ

Սկիզբը՝ էջ 4

Բանաստեղծության երկրորդ տան սկզբ-նամասը փոփոխության է ենթարկում ա-ռաջին տան լուսավոր եւ մութ գեղարվես-տական հնարքները: Ինչպես կարելի էր նկատել, «Մեկ այլ փրկություն» բանաս-տեղծության մեջ Հարուդ Բոնդը փորձում է հայնաբերել ինչ-որ բան եւ ինչ-որ բան էլ մոռացության մատնել: Այստեղ երեւացող փարոսը մոմերի պես օգնում է հային կրկին անգամ տեսնել անցյալի մոգավանքերը՝ թուրքերի կողմից իրագործված ոճիրը: Այն ժամանակ, երբ քամին ցրում է կյանքի սեր-մերը եւ արմատախիլ անում կյանքը, գոհո-ղությունը կարող է փոխհատուցվել՝ երի-տասարդ սերնդի մեջ հավատը վերածնելու միջոցով: Այս ուժգին հավատի իրական դր-ստորումը պահանջում է էկզիստենցիալ ընտրություններ: Վերջիններից մեկը ցե-ղասպանության հետեւանքների վերաց-ման ուղիներն են: Եղեռնից փրկված մարդ-կանցից ծնված ցանկացած երեխայի պա-րադոքսալ ժառանգությունն էլ ավելի է բարդացնում իրավիճակը: Նման երեխա-ների համար կյանքն ուղղակի երջանիկ պատահականության արդյունք է, քանզի իրենց ծնողները փրկվել են կոտորածնե-րից: «Մայրս ասել էր ինձ, որ ես հիմա գո-լություն ունեմ միայն այն պատճառով, որ ինքը գտնվում էր միսիոներների մոտ այն ժամանակ, երբ իր գյուղը պատերազմա-կան շրջանում ռմբահարության էր են-թարկվում»: Կյանքի հոսանքը մեկ սերնդի վախերն ու հույսերը փոխանցում է հաջորդ սերնդին: «Այսպիսով, ես էլ հանդիսանում եմ այդ վախերի ու հույսերի կրողը»,- եզ-րակացնում է սփյուռքահայ բանաստեղծը (տե՛ս Bedrosian M. Նշվ. աշխ., էջ 189):


Ծիշտ այնպես, ինչպես «Քարը» գրվածքի

հերոսուհին պահանջում է, որ մարդիկ ճա-նաչեն իր վիշտը, այդպես էլ հայ ժողովուր-դը պահանջում է, որ աշխարհը ճանաչի իր ողբերգական անցյալը: Այնպես հայու-թյան մորմոռը երբեւէ չի փարատվի: Հայե-րի ողբերգական անցյալը ճանաչել տալը բարդ խնդիր է երկու պատճառով: Նախ եւ առաջ՝ բարդ է օգուտ գտնել հայ ժողովրդի արդեն իսկ մշուշոտված վշտի մեջ, որը ժա-մանակի ընթացքում էլ ավելի է մշուշոտ-վում, երկրորդ՝ Եթնիկ ընտանիքի գոյություն ունեցող կապերը գնալով թուլանում են: Դրանք այլեւս ի գորու չեն պահել-պահա-նել անցյալի «պատկերը, ձեւը եւ գույնը»: Ինչեւէ, երեխաների միավորումը կարելի է երկու սերունդների բարեկեցության հա-մար: Եղեռն վերապրած ծնողները պատ-մում են անցյալի պատմությունները՝ իրենց հոգեկան վերքերից ազատվելու համար: Պատմություններ պատմելն իրենից դեռ ու դարման է ներկայացնում: Այսպիսով՝ եթե ծնողները չհաղորդակցվեն իրենց ժառանգ-ների հետ, նրանք էլ ավելի ծանր հոգեվի-ճակի մեջ կհայտնվեն:

Եթե եղեռն վերապրածների հետևորդ-ները փորձեն փախչել անցյալի խավարից, նրանք այդ քայլով լույ կդանդաղեցնեն ի-րենց հասունացումը: Մարդ երբեք չի կա-րող փախչել ինքն իրենից, այն անանուն վախերից, որ ծնողները փոխանցել են ի-րեն: Այս առումով Եթնիկ փոքրամասնու-թյունների երեխաները խոցելի են: Տարա-գիրների երկրորդ սերնդի ներկայացուցիչ-ները փաստում են, որ իրենց ծնողները մեծ ջանքեր էին թափում իրենց նոր հնարա-վոր վտանգներից զերծ պահելու համար: Այս ձգտումն արդեն կազմում սովորության բնույթ էր ստացել: Այն, ինչ ունակ էր փոքր-ինչ մեղմել անցյալի հոգեկան վերքերը,

միեւնույն արյունակցական կապն էր: Ե-ղեռն վերապրած մայրը պատմել էր որ-դուն, թե ինչպես էր ինքը հրաշքով փրկվել մահից: Տղան ապրում է՝ մտքում պահելով իր ծնողի պատմությունը, եւ նա վերջինիս մեջ նպատակ ու հավատ է գտնում: Սա-կայն այդ նպատակը բավականին խճ-ված է եւ դժվար արտահայտելի: Այդ նպա-տակը նման է այն սեւ գույնին, որը դյուրու-թյամբ ճեղքվում է լույսի կողմից: Այդ նպա-տակը գուրկ է հստակությունից: Այն չունի ո՛չ հստակ պատկեր, ո՛չ ձեւ եւ ո՛չ էլ գույն: Եվ ճիշտ հակառակը. քանի որ սեւ գույնը բոլոր երանգների հիմքն է, զգացմունք ա-ռաջացնող եւ աշխուժություն հաղորդող նպատակ, խթանում է ցանկացած իմաս-տավորված գործողություն:

Հարուդ Բոնդը մի անգամ փորձում է բա-ցատրել իր մորաքրոջը, թե ով է ինքը՝ ան-կախ իրենց տարիքային եւ աշխարհայաց-քային տարբերությունների: Բանաստեղծն իր արարքով անուղղակիորեն ցույց է տա-լիս, թե ինչ պատասխանատվություն ունի ավագ սերունդը կրտսեր սերնդի հանդեպ: Նրանք պիտի ընդունեն, թե որտեղ են ի-րենց երեխաները եւ այս նոր տեղի մեջ գտ-նեն իրենց ինքնության Էվոյուցիան: Բոնդը ստեղծագործում է: Նա տեսնում է պատ-մության մեջ առկա արտաքին եւ մարդկա-յին հոգու ներքին դատարկությունները: Նկարագրելով վերջինս՝ արվեստագետը փոխակերպում է դրա իմաստը: Այս հար-թության վրա պոետի նամակը կարծես ուղ-դորդում է ցանկացած եզրագծային փորձի՝ անցնելու «անցյալի եւ ներկայի միջեւ եղած կամուրջը»: Սիմվոլիկ կերպով աս խորի-դանշում է անցումը Հին Աշխարհից դեպի Նոր Աշխարհ: Այդ անցումը մենք պետք է սկսենք առկա կետից, այն է՝ եզրագծից:



Այդ անցումը պետք է իրականացվի հակա-դիր բեռները բացահայտելու միջոցով: Հնից դեպի նորն անցում կատարելու հա-մար հարկավոր է նաեւ անտեսել ուժաց-ման վտանգը: Ծիշտ այնպես, ինչպես հա-յերը՝ այդ դասական «եզրագծայինները», կարողացել են ընդմիշտ պահպանել իրենց ողջ մշակութային ավանդույթը՝ մոմի լույ-սով լուսավորված հավերժության օգնու-թյամբ, այդպես էլ ազգային փոքրամաս-նության ներկայացուցիչ հանդիսացող ցանկացած արվեստագետ պետք է հաշվի առնի եզրային լինելու հանգամանքը (տե՛ս Bedrosian M. Նշվ. աշխ., էջ 190): Այսպիսով՝ ոգեշնչվելով մտալ մարտահրավերից՝ բա-նաստեղծը հնարավորություն է ստանում ստեղծելու իր անմահ գրվածքները:

Տիգրան ՄԱՆՈՒՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու

ՖԵԼԻԵՏՈՒԻ ԺԱՆԸ «ՄԵՍԿ» ԼՐԱԳՐԻ ԷՋԵՐՈՒՄ

Սկիզբը՝ էջ 7


Հաջորդված են ստացվել նաեւ հաջորդ ֆելիետոնները, եւ դա միայն այն բանի շնորհիվ, որ Արծրունիին ընտրել է կոնկրետ խնդիրներ եւ արդեն առանց եր-կար վերլուծությունների՝ կատա-րել կծու հարցադրումներ ու կոնկրետացումներ: Իհարկե, այս դեպքում էլ հեղինակն ավելի շատ շեշտը դրել է հայ մարդու պակասությունների վրա:

Նա շատ դիպուկ տալիս է հայ մարդու հոգեկերտվածքը՝ միշտ շեշտելով, որ յուրաքանչյուրը հույսը կապում է ոչ թե սեփական ժողովրդի, հայ մարդու հետ, այլ սպասում ու ակնկալում է արտա-քին միջամտություն (հիշենք, որ շատ հարցերում Արծրունին ինքն էր ակնկալում արտաքին ուժերի ներգործություն): Ֆելիետոնիս-տին հատկապես «սարսափեց-նում» է այն միտքը, որ Թուրքիա-յի հայերը կարող են բարենորո-գումների հնարավորություն ստանալ (ակնարկում է Սան Ստեֆանոյի եւ Բեռլինյան վեհա-ժողովի ընթացքում ձեռք բերված այն պայմանավորվածություննե-րը, որոնց համաձայն՝ Արեւմ-տյան Հայաստանը պետք է ա-ռանձին մարզերի բաժանվեր): «Վտանգը» այն կլինի, որ յուրա-քանչյուր հայ կսկսի նախ եւ ա-ռաջ մտածել մարզպան ընտրվե-լու կամ Նշանակվելու մասին, մինչդեռ հարկավոր է նախ հա-մատել ուժերով պահպանել այդ ինքնավարությունը: Այս դեպ-քում, դժբախտաբար, Արծրունին իրավացի է. «Յուրաքանչյուր հա-յը մի որեւէ Աբրահամ փաշայից սկսած մինչեւ վերջին թուլութիւն կուզենային մարզպան ընտրվել եւ վերջը ոչ ոքին չէին ընտրի» (ընդգծ. - Ա. Գ.) (1879, հ. 24):

1880-ականների սկիզբն ար-գասաբեր չէր Ասիացու համար: Յուրաքանչյուր տարի (1880,

1881) լույս տեսավ ըն-դամենը 4-5 ֆելիետոն: 1880 թ. ֆելիետոննե-րում Ասիացին շարու-նակում է պաշտպան-վել՝ հակառակորդնե-րից՝ մեկ առ մեկ թվար-կելով այն բարենորո-գումները, որոնք իրա-կանացի է «Մշակ»-ը: Եթե ոչ բարենորոգում, ապա գոնե պետք է ըն-դունել Արծրունու բարձ-րաձայնած խնդիրների կարեւորությունը: Հատ-կապես մայրենի լեզվի հարցը, դրանով տար-վող կրթությունը միշտ հուզում էր խմբագիր, գրող, հրապարակա-խոս, ֆելիետոնիստ Արծրունուն: Խմբագիրը խոսում է նաեւ հայ հասարակության ան-համերաշխ լինելու մասին, ցա-վով ծաղրում՝ միաժամանակ փորձելով հասկանալ դրա պատ-ճառը. «Ես հասա այն եզրակա-ցությանը, թե այդ տխուր երեւույ-թի (անհամերաշխության - Ա. Գ.) պատճառն այն է, որ հայը դեռեւս ըմբռնում է միմիայն ընտանիքի, ազգականության գաղափարը եւ դեռ չի ըմբռնում հասարակու-թյան, ազգության գաղափարը» (1881, հ. 209):

Վերահրատարակվելուց հետո (1886) Ասիացին ընթերցողին խոստանում է յուրաքանչյուր ամսվա վերջին գոնե մեկ ֆելիե-տոն հանձնել նրա դատին: Այդ տարվա ֆելիետոններից ուշադ-րության արժանի են հատկապես 35-րդ եւ 41-րդ համարներինը, ուր ներկայացնում է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի նորընտիր հոգաբարձուներին: Իրականում դրանք փոքրիկ դիմանկարներ են, որոնցում հեղինակը մի քանի նախադասությամբ ներկայաց-նում է նրանց նախկին գործու-



նությունը, կատարում ենթադ-րություն եւ անում բարեմադ-թանք: Բնութագրականներից յուրաքանչյուրում ավելի կամ պակաս չափով առկա է երգի-ծանքը, չնայած առանձին դեպ-քերում ֆելիետոնիստն ընդամե-նը փաստեր (ոչ երգիծական) է արձանագրում: Իհարկե, համե-մատության եզրեր չեն կարող ու-նենալ Պարոնյանի կերտած հրա-շալի դիմապատկերների հետ («Ազգային Ձոռք»), սակայն ա-ռանձին պատկերներ իրենց փոքր ձեւի մեջ փոքր-ինչ հաջող-ված են: Ուշադրության արժանի են Աբգար Յովհաննիսյանի, Գ. Ա-քիմյանի եւ բժիշկ Մարկիանոս Ռոտինյանցի բնութագրականնե-րը: Վերջինիս Ասիացին բնու-թագրում է որպես «բանիմաց, ա-մեն բանից հասկացող» մարդու, որովհետեւ, միեւնույն է, առանց հասկանալու խոսում է ամեն ին-չի մասին, իսկ իբրեւ մասնագետ. «Լավ բժիշկ է. նրա բժշկությունը շատ հասարակ է. ամեն հիվան-դության դեմ միշտ միեւնույն եր-կու դեղ ունի: Հիվանդի գլուխն է ցավում թե փորը, աչքը թե ոտը,

կուրծքը թե ականջը,- «բաթանի շապիկը հա-գիր» կամ «խիսա ըն-դունի» ասում է» (1886, հ. 35): Չայրացած ֆե-լիետոնիստը վերջում արդեն առանց ծաղրի նշում է, որ այդ բոլորի մեջ քչերը կան, որոնք ինչ-որ բան իմանան մանկավարժության մասին եւ առհասարակ դպրոցական որեւէ կազմակերպությունն տեսած կամ գոնե կար-դացած լինեն: Այս ամե-նը հեղինակին արդեն մեկ այլ ֆելիետոնում (1886, հ. 120) հիմք ու հնարավորություն է տալիս երկար մեջբե-

րում կատարելու Մ. Խորենացու «Ողբ»-ից՝ փորձելով հասկանալ, թե ինչ առաջընթաց է արձա-նագրվել: Միայն առաջընթացն այն է, որ, ի տարբերություն 5-րդ դարի, «քաղաքակրթված» հա-յերն արդեն իրենց գող, ավագակ, անուսումնաստեւչ համարողնե-րին այլեւս չեն հալածում այդպես ուժգին եւ գերեզմաններից էլ ոս-կորները չեն հանում (ակնարկում է Խորենացու նկատմամբ կա-տարվածը):

1888-ի մի քանի ֆելիետոնների համար հեղինակին նյութ են ծա-ռայում Րաֆֆու թաղումը եւ դրա արձագանքները հայ ու ռուսա-կան մամուլում: Ասիացին բնավ չի խոսում Րաֆֆի գրողից, նրա անձից (այդ մասին նա հանգա-մանալից խոսում է նույն թվակա-նի ապրիլի 28-ի հ. 48-ում տպագրված «Հակոբ Մելիք-Հա-կոբյան» հոդվածում), այլ ցավով ընթերցողին ներկայացնում է, թե ինչքան լավ թաղել գիտենք, որը նկատում են նաեւ օտարները: Մեջբերելով ռուս հոդվածագրի խոսքերը՝ Ասիացին ավելի է ընդ-

լայնում հայտնի միտքը. «Ռուս հեղինակը շատ իրավացի նկա-տում է, որ հայերը գիտեն թաղել իրանց նշանավոր մարդկանց... Այո, այդ բոլորովին ուղիղ է. հա-յերը գիտեն փառավոր, աննման կերպով ամեն բան թաղել, գի-տեն թաղել թե իրանց մարդկանց եւ թե իրանց հիմնարկություննե-րը, գիտեն թաղել ոչ թե միայն մե-ռածներին, այլեւ կենդանի եղած-ներին...» (ընդգծ. - Ա. Գ.) (1888, հ. 64): Ընդգծված միտքն Արծրու-նու կողմից բազմիցս նախկինում ակնարկվել էր, սակայն այսպիսի կոնկրետ ձեւակերպում չէր ստա-ցել: Նա միշտ խոսում էր այն ոչ համարժեք ընդունելության մա-սին, որին արժանանում էր հայ մտավորականը: Չպիտի նեղաց-նենք ու անձնավորենք այս դեպ-քը՝ ընդունելով, որ նա նկատի ու-նի ոչ միայն իրեն ու «Մշակ»-ին, այլեւ շատ ուրիշ գրողների ու մտավորականների:

Շարունակելի

Արշալույս ԳՆԱՍՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու,
դոցենտ

ԵՐԻՍՏՈՆՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

Հիմնադիր՝

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հրատարակիչ՝

«Զրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն

Գլխավոր խմբագիր՝

Աստղիկ Ստամբուլյան

Գրանցման վկայական՝ 624

Խմբագրության հասցեն՝

Մայր Աթոռ Սբ Էջմիածին

Հեռախոս՝ 517197

Էլ. փոստ՝ qristhay@etchmiadzin.am

astghikstam@gmail.com
web կայք՝

krishayas.wordpress.com
Ստոր. տպագր. 16.3.2016 թ.

Տպաքանակը՝ 2100
Գինը՝ 50 դրամ